Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8589

I.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

II.

ԿԻՐԱԿՈՍԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

(ԽՈՑԵՑԻՈՑ ԲԱՐԲԱՌՈՎ)

ԳՐԱՇԱՐ ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1903

68-58

Дозволено цензурою 5 Юня 1903 г. г. Тифлисъ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մենք Կիրակոսի Նշանադրութիւնը սկսել էինք մի քանի ոտանաւորներով, որոնք արդէն յայտնի եղան մեր յարգելի ընթերցողներին: Այժմ գիջանելով ընթերցող դասակարգի պահանջներին՝ մենք հրատարակում ենք եւ Կիրակոսի Հարսանիքը, դնելով նորա սկզբում նոյնպէս մի քանի ոտանաւորներ, ներողութիւն խնդրելով ընթերցողներից մեր թերութիւնների մասին:



ԻՆՁ ԻՆՁ

Երբ ոսկիքս առատ, հարիւր հազարով,
Զանդուկներս լի թանկագին ակով,
Կառքերս սեպհական, խանութներս շատ,
Որդիքս էլ մարմնով չունին մի արատ.
Քանի յարգ, պատիւ չունիմ ոչ ոքից՝
Սիրաս էլ միշտ տխուր, ու տրտում։ ինձ ի՞նչ։

Երբ ես ունիմ մի քանի զաւակներ,
Եւ նորանց հետ էլ հարսներ ու թոռներ,
Նորանք ինձ՝ տան մեծ որ չեն ճանաչում,
Ո՛չ երկիւղ կրում, ո՛չ էլ ամաչում,
Ի՛նչ շահ իմ թողած մեծ կալուածներից,
Երբ նորանք կուտեն, կըվատնեն. ինձ ի՞նչ։

Երբ տղայք, հարսներ, ամենքն նորասէր,
Զըկայ նորանց մէջ միութիւն և սէր,
Կաղ ու կռիւներ երբէք պակաս չեն,
Թէև աղախին, ծառայք էլ ունեն,
Նորանք թէ ոսկի, արծաթ զարդերից,
Պճնուեն, հագնեն ծիրանի. ինձ ի՞նչ։

Երբ որ հօտերս են հարիւր ու հազար,
Զըկայ նորանց մէկ տնտես կառավար,

Ծառայքս՝ հարազատ որդիք են եղել,
Իսկ իմ զաւակներս՝ որդուընք են եղել.
Գոհ չեն նոքա իմ թողած վաստակից,
Զլկրկնեմ՝ չասեմ ես. հապա ինձ ի՞նչ։

Թող տունս լինէր միշտ ուրախ, խաղաղ,
Մի կտոր չոր հաց, մի փոքր էլ սև աղ,
Միայն անխռով բոլորս ճաշէինք,
Փառք քեզ Տէր Աստուած՝ ամենքս ասէինք.
Զուրկ չէի մնալ աշխարհի փառքից,
Ի՛մն է կասէի, իմն է՝ ամեն ինչ։

Կինս է, որ փոքր ինչ կըտայ ինձ հանգիստ,
Կապրէ քաղցրութեամբ՝ չէ այնքան նա խիստ.
Եւ այդ յոյսով է որ միայն կապրեմ,
Մինչև մէկ օր էլ գերեզման մտնեմ։
—Արձանս լինի ոսկուց, արծաթից,
Իմ մահից յետոյ չասեմ—ինձ ի՞նչ։

ՎԱՐԴԻ ԴԱՆԴԱՏԸ

Պայիսեան վարդ եմ, հոտաւէտ, անուշ,
Տերևներս կանաչ, թերթիկներս քնքոյշ.
Զէփիւռիցն անգամ ես երկիւղ ունեմ,
Գուցէ՛ մի զարկ տայ՝ շուտով թառամեմ։

Զեզ էլ յայտնի է, զէփիւռով կապրեմ,
Դարձեալ նորանից ես կասկած ունեմ.
Արեգակն է ինձ քիչ զօրացուցիչ,
Իսկ մեղմիկ լուսինն միակ սփոփիչ։

Ես արեգակին սիրում եմ միայն,
Արշալուսից մինչ եօթն, կամ ութ ժամ.
Իսկ այնուհետև կիզիչ թշնամի,
Զեմ ուզում անգամ, երեսը տեսնի։

Ես այն ծաղիկն եմ՝ եկայ դրախտից,
Վարդ կոչուեց անունս մեր հայր Ադամից.
Շատ բանաստեղծաց և շատ շատ երգչաց՝
Նիւթեր եմ տուած, քնարից կախուած։

Յանկարծ դուրս եկան վարդեր Յուլիսեան,
Կուզեն վարդ ծաղկիս մի կեղծ անուն տան,
Իրենց արատը ինձ վրայ դնեն,
Շատին խաբելով՝ վարդիս տեղ բռնեն։

Իսկ մենք կըխնդրենք բանաստեղծներից,
Զոկել, որոշել մեզ կեղծ վարդերից.
Զբխաբուել նորանց կարմիր գոյներին,
Ո՛չ անհոտ ծաղկին, ո՛չ լայն տերևին։

Մենք նեղ տերևով, և անուշ հոտով,
Պայիսեան վարդ ենք՝ առանց դիմակով.
Դո՛ւք, նոր բանաստեղծք, օրինակ առէք,
Քնական վարդը՝ կեղծից որոշէք։

ԴԵՂԻՆ ՏԵՐԵՒ

Ես քո մեծ ծառիդ բուն արմատիդ տակ,
Պարկած եմ արդէն արձակ, համարձակ.
Մենակ դու չես որ՝ ծառից թափվում ես,
Եւ կանաչ գոյնից՝ դեղին փոխվում ես։

Նայիր կարմրախայտ այն խնձորներին,
Ի՞նչպէս են գլորուած ու թափուած գետին.
Նոքա շատ ոտից կոխան են դարձել,
Շատ յիմարներից ի զուր անարգուել։

Ինչո՞ւ դու ուրեմն տխուր ու տրտում,
Արցունք թափելով՝ ցած ես գլորվում։
— Մենք էլ թողնում ենք հայրիկ ու մայրիկ,
Գերեզման մտնում՝ լռիկ ու ճնշիկ։

Մենք էլ սկսել ենք մեր գոյնը փոխել,
Դէպի գերեզման քիչ-քիչ քայլ կոխել.
Հաւատա՛, եթէ մեր կամքով լինէր,
Չէր ցանկայ ո՛չ ոք գերեզման մտնել։

Այդ մեծ Ադամից մեզ մնացած են,
Քանի՞ քանիսներն եկած, անցած են,
Որոց անուններն յիշելու համար՝
Թերթեր են մեզ պէտք հարիւր ու հազար։

Ամուր, հաստատուն արմատիդ նայիր,
Կը գայ մի օր որ՝ տեղն էլ չերևիր.
— Աշխարհս այդպէս է, միշտ յաջորդաբար,
Կըգան ու կերթան՝ մէ՛կը չի՛ մնար։

Ա. Ռ Ա Կ.

ԷՇԸ ՊԱՐՏԻԶՈՒՄ *)

Ա և իշուն մէկը մի պարտէզ մտաւ,
Ամեն մի պտուղ նա այնտեղ գտաւ.
Երկար մտածեց, նայեց, հոտոտեց,
Ամբողջ պարտիզի չորս կողմը դիտեց։

Իրեն ճաշակին ոչինչ չերևաց,
Սկսեց մեղեդին և այսպէս ասաց.
— Կարծես ամեն ինչ մարդկանց համար է,
Հապա էշ իշխանն ի՞նչ պիտ՝ վայելէ։

Սերկևիլ, սալոր, ու խոշոր տանձեր,
Դեղնագոյն ծիրան, կարմիր խնձորներ.
Նորանց մէջտեղում փայլում են վառվում,
Համեղիկ խաղող՝ ուռո՛ղ են կանչում։

---

*) Իդդիր, Աւետիս Տէր-Թովմասեանի պարտիզում։

Դորանք բոլորն էլ ինձ դիւրեկան չեն,
Որքան էլ կուզեն՝ ըղաւեն—կանչեն.
Ինձ համար լինէր իմ ուզած խոտը,
Ուտէի, երգէի՝ կանգնէի մօտը։

Ի՞նչ հարկաւոր է իշուս այդ միրգեր,
Դոքա միայն են ծառերի զարդեր.
— Ամեն ոք իրեն սիրածն ունի,
Հէնց նորա մօտ էլ արժէք, գին ունի։

Ասաց ու փոքր ինչ առաջ ընթացաւ,
Մի տանձենուոյ տակ ուզածը գտաւ.
Մտաւ նորա տակ խոտը արածեց,
Գլխից մինչ ագին՝ տանձեր տարածուեց։

Արջը հեռուից դիտում էր, լսում,
Փընթփընթում էր նա և այսպէս ասում.
— Ինձնից էլ յիմար կենդանիներ կան,
Չէ՛ ուզում նայել կռնակի վերան։

Իմ սիրած տանձերն էշն էլ կանարգէ,
Անհամ ու անհոտ խոտն կարածէ.
— Փա՜ռք քեզ, Տէր Աստուած, որ վերջինն չեմ,
Օրհնեա՛լ է քո սուրբ կամք, ի՞նչպէս ես չերգեմ։

ՀՈՎՈՒՒ ՍՈՒԳԸ

(Նուէր Հայոց Հայրիկին).

Պապս հովիւ էր, նոյնպէս էլ հայրս,
Հովուհի էին տատս և մայրս.
Հազար, հազարներ ոչխար ունէին,
Թէ հովիտ, բլուր ողջ իրենցն էին։

Ազա՛տ, աներկիւղ, կարածէին հօտերը,
Իրենց պապերից թողած արտերը.
Օդը գեղեցիկ, ջրերն պաղ, առատ,
Մարմնով խիստ կայտառ՝ չունէին արատ։

Ո՞ր կենդանակերպն Տանուտէր եղաւ,
Ամառն կրակոտ, ձմեռն ցուրտ եղաւ.
Այդ մեծ հօտերի երրորդ մասերին,
Անխնայ կերպով սաստիկ ջարդ տուին։

Դեռ այդ եղած էր պապիս օրերում,
Էլ ի՞նչ թիւ մնաց իմ հօրս ձեռքում.
Այդ մնացածով՝ հայրս եղաւ գոհ,
Տուեց Արարչին պատարագ ու զոհ։

Բայց ի՞նչպէս եղաւ, մի ամպամած օր,
Բարևեցին իմ խղճուկ, թշուառ հօր.
Մինչդեռ այն մեծ սարերի ծայրում,
Մնացած փոքրիկ հօտն էր արածում.—

Թխպագոյն ամպերն երբ որ սաստկացան,
Քամի, անձրևներ, հէնց որ միացան՝
Հօտը կորաւ խեղճ հովուի աչքերից,
Կանչում էր նորանց սարի բարձրերից։

Այն ինչ գայլերը ամպ օր կուզէին,
Փոքրիկ հօտի մէջ շուտով թափուեցին.
Մինչ նոր էր պարզել երկիր և երկին՝
Հազիւ ողջ գտաւ նա մի քանիսին։

Հայրս էլ պապիս պէս գերեզման գնաց,
Այդ պաշտօն ու պարտք միայն ինձ մնաց.
Այժմ գլխակոր հօտի ետևից՝
Կողքամ, կը խնդրեմ ես Վեհ Արարչից.

— Այս մի քանիսի կեանքն ինձ խնայիր,
Սորանց անվտանգ, անսասան պահիր,
Որ նոր կեանք, նոր յոյս, նոր սիրտ առնեմ ես,
Քո սուրբ Անունդ չը հանեմ սրտէս։

ԱՂԱՒՆԻՆ ՈՒ ՃՆՃՂՈՒԿԸ *)

Դանդաղ Աղաւնին թէ ինչպէս եղաւ՝
Մի փոքր պանրի կտորիկ գտաւ.

*) Տփխիս՝ Ս. Գէորգ եկեղեցւոյ բակում։

Ճեմելով, նազով, մինչ տեղից շարժեց,
Ճարպիկ ճնճղուկը շուտ վրայ վազեց։

Մինչդեռ Աղաւնին հազիւ մի անգամ
Կացահարեց ու գլորեց նորան,
Փոքրիկ ճնճղուկը իւր բանը տեսաւ,
Իսկ երկրորդ փորձին՝ առաւ ու թռաւ։

Խղճուկ Աղաւնին շուարած մնաց,
Անիծեց ճնճղուկին, փընթփընթաց, ասաց.
— Կատո՜ւն ուտի՛ քեզ, փոքրիկ սատանայ,
Ի՞նչպէս բաժինս կերար անխնայ։
Որտեղից որտեղ գտայ ես նորան,
Զը թողիր փոքր ինչ մնէր իմ բերան։

Ճնճղուկը բարձրում ճաշելով ասաց.
— Եթէ ամենքը իրենց վաստակած
Վայելեն, ուտեն, երջանիկ ապրեն՝
Գիտցի՛ր, շատերը քաղցած կըմեռնեն։
— Դանդաղ մարդիկ էլ մինչ կը մտածեն՝
Ճարպիկներն իրենց գործը կը տեսնեն։

ՁԿՆԻԿ *)

Այդպէս դու անհոգ լողում ես ձկնիկ,
Շուտով կորսան քեզ, ձկնորս են մարդիկ.
Անմեղ խաղալուդ զո՞ւր է ապագան,
Նոքա վարպետ են, միմեանց էլ կորսան։

Ամուր երկաթից կարթեր կը շինեն,
Ծայրին ուտելու բան կը հագցընեն.
Երբ գաս, մօտենաս, նորան ուտելու՝
Դուրս կը քաշեն քեզ՝ առանց խղճալու։

Նոյնպէս նուրբ թելից ուռկան կը գործեն,
Եղերք դուրս գալիս՝ վրադ կը ձգեն.
Դու միշտ խորքերում ցաթկոտէ, խայտա՛,
Որքան որ կուզես՝ ելևէջ արա՛։

Լճի մէջ տեղում լողա՛ դու ազատ,
Լսի՛ր խրատս ու պահէ հաստատ.
Մի՛ լողար անհոգ, իմ սիրուն ձկնիկ,
Մի՛ շրջիր այդպէս՝ դու լճի եղրիկ։

*) Ս. Էջմիածնի լճի ափում։

ՀԱՒԻ ԶԱՐՄԱՆՔԸ *)

Մի պառաւ երրորդ անգամ թուխս դրեց.
Բայց մի նոր փորձ մեր պառաւը փորձեց,
Հաւի ձուի տեղ բադի ձու դարսեց,
Ինչպէս որ կարգն էր՝ պահեց, խնամեց։

Լրացաւ ժամը, բոպէն ու վայրկեան,
Հաւը ունեցաւ ձագեր պատուական.
Մի միջոց նորանց կերակրեց, պահեց,
Շատ-շատ փորձանքից փրկեց, ազատեց։

Մի օր ժողովեց նա իւր ձագերին,
Արօտի տարաւ գետի եղերքին.
Ձագերը ջուրը որ յանկարծ տեսան՝
Միմեանց յետևից գետը թափուեցան։

Մեր խղճուկ հաւը շուարած մնաց,
Ճիչ ու աղաղակ բառնալով ասաց.
— Ի սէր Աստուծոյ, օգնութեան հասէք,
Սիրուն ձագերիս մահից ազատէք։

Ի՛նչ արեց-չարեց՝ գետից դուրս չեկան,
Սառը ջրի մէջ մի լաւ լողացան.
Քաղցը ստիպեց՝ եղերք դուրս եկան,
Եւ իրենց հաւ մօր շուրջը կանգնեցան։

*) Փարպաքար գիւղում։

Զարմացաւ հաւը, ինքն իրեն ասաց,
Այսպէս լաւ լողալ, ումնից են սովրած.
Իսկ եթէ դորանց մայրիկը ես եմ,
Այդպէս մի շնորհ՝ երբէք ես չունեմ.

—Անշո՛ւշտ մի խառնուրդ, կամ մի գաղտնիք կայ,
Բացի պառաւից՝ էլ ո՞վ կիմանայ.
Տխուր ու տրտում նա տուն շտապեց,
Գլխին եկածը պառաւին պատմեց:

ՊԱՌԱՒԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

Պառաւը շատ խոր, երկար մտածեց,
Անցեալ օրերն նորից միտ բերեց.
—Նստի՛ր, իմ հաւիկ, նստիր որ ասեմ,
Գլխիս եկածը մի առ մի պատմեմ:

— Երբ ամուսնացայ՝ մարդս շուտ մեռաւ,
Դառն աղքատութիւն իմ շուրջս առաւ.
Զունէի ո՛չ մէկ արու, էգ զաւակ,
Որ իմ մահից յետ մնար յիշատակ:

Քաղց ու նեղութիւն սաստիկ ճնշեցին,
Այրիս կրկին լծի տակ դրին.
Մէկ շատ որդւոց տէր մարդի կին եղայ,
Պահի, մեծցուցի ու մայրիկ եղայ:

Քո ձագերիդ պէս երբ որ մեծացան,
Իսկական մայր չեմ, հէնց որ իմացան,

Ինձ խորթ կասէին. մինչ պառաւ դարձայ,
Այդ ամուսնից էլ շուտով զրկուեցայ:

Նորանք ամէնքն էլ մի մի տուն եղան,
Կին ու որդւոց հետ քաղցր քուն եղան.
Իսկ ես, անբաղդս՝ մնացի թշուառ,
Եւ հալածուեցայ իբրև մայր օտար:

— Այն ձուերը քեզ իսկական չէին,
Նորանք վայրենի բադի ձու էին.
Եւ հէնց ես դիտմամբ, այդ նպատակով,
Կամեցայ տեսնել մի այդպէս փորձով:

Վաղը նորանք քեզ չնչին պատճառով,
Տանից դուրս կանեն քաղցած թողնելով.
Որչափ էլ նորանց դու լաւ պահպանես,
Դարձեալ դու ինձ պէս խորթ անուն ունես:

— Որբ երեխաներն անխնամ մեռնեն,
Որ խորթ ասած խօսքը պատճառ չբռնեն . . . :

ԹԱՋԱՑ ՀԱՑ

Աղքատի մէկը հապիւ հաղ ճարեց
Երկու փութ ալիւր, առաւ տուն բերեց.
Ունէր սա ուղիղ տան դերդաստան,
Ոչ մի վառելիք չէկար նորա տան:

Նորա ժիր կինն ոտքի կանգնեցաւ,
Ամեն նեղութեան նա յօժար եղաւ,
Տաշտ, մաղ ու գռանակ ճարեց պատրաստեց,
Դրացւոց դռներից՝ ժողովեց, բերեց։

Նա ողջ գիշերը անքուն, անդադար
Խնամեց երեխայքն, տանջուեց չարաչար.
Խմոր պատրաստեց, ամեն ինչ հոգաց,
Մինչդեռ բոլորն էլ քուն էին մտած։

Արշալոյսի մօտ իւր գործն սկսեց,
Արև դուրս չեկած՝ հացեր պատրաստեց.
Երբ երեխայքն քնից զարթնեցին,
Քանի՞ մի քանի հացեր ջարդեցին։

Ցանկարծ մուրացիկք այդ դուռ թակեցին,
Միմեանց յետևից շուտ ներս թափուեցին.
«Քոյրիկ, ձայն տուին, — մեզ մի կտոր հաց,
«Քանի՞ օր է որ՝ նօթի ենք, քաղցած»։

Կինն կարճ միջոց սաստիկ կսկծաց,
Սրտի խորքերից հառաչեց, ասաց.
— Ձի՞ որ երեկ էլ մենք քաղցած էինք,
Եւ Աստուծոյ վերայ դեռ յոյս ունէինք։

— «Եկէ՛ք քոյրերս, առէ՛ք դուք բաժին,
«Քաղցած մի՛ թողնէք դուք ձեր որբերին.
«Հոգացող Աստուած՝ կրկին հոգ կանի,
«Մեզ էլ նորանց հետ՝ քաղցած չի թողնի»։

— Աղքատ կնոջից օրինակ առէ՛ք,
Դո՛ւք, ճոխ հարուստներ, թշուառին օգնէ՛ք.
Դրամով, հացով, շահեցէ՛ք նորան,
Ձէ՛ք մնալ քաղցած, ծարա՜ւ յաւիտեան . . .։

ԶԱՐՄԱՆՔ ՉԷ՞

Զարմանք չէ՞ երբ մարդ իւր ճամբան կերթայ,
Բեռնաւոր իշուն՝ նա ճամբայ կըտայ.
Էշն իւր ուղղութեամբ գնում է շարունակ,
Շատ յիմարների տալով ոտքի տակ։

Էշն ի՞նչ անէ, երբ որ խեղճն էշ է,
Բեռը կռնակին՝ ճամբան խիստ գէշ է.
Ձէ զգում այնքան, որ շաւղից դուրս գայ,
Իւր մեծ եղբօրը ճանապարհ ցոյց տայ։

Թէ մեր անցորդն էլ իշուն խելքն ունի,
Շուտով անցնելու մի ելք չըգտնի՝
Երկուսն էլ պէտք է գլուխ գլխի տան,
Շատ երկար միջոց՝ արգելուած մնան։

Զարմանք չէ՞, երբ որ մի կատարեալ մարդ
Մի կողմ քաշուելով՝ իշուն կըտայ յարգ.
— Թող գնա՛, կասէ, խեղճն ինչ է զգում,
Երբ բնական նա էշ անուն է կրում։

— Ցիմարներին միշտ պէտք է ճամբայ տաս,
Թէ որ ուզեցիր քարոզ, ճառ կարդաս,
Ժամեր և օրեր դեռ բաւական չեն,
Տարիներ անգամ կասեմ որ քիչ են։

Նա իւր գիտցածով պէտք է ընթանայ,
Տանջուէ չարաչար՝ որ առաջ գնայ.
Մարդս է՝ որ իրեն իշուց կըպատէ,
Խելքով, հնարքով ջաղաց կուղարկէ։

ԵՐԿՈՒ ՀՕՏԵՐ

Մէկ հարուստ երկու մեծ հօտեր ունէր,
Մէկը խառն ի խուռն, իսկ միւսը սև էր.
Երկու հօտերն էլ ջոկ կարածէին,
Նորանք առանձին հովիւ ունէին։

Խառն հօտերն՝ ոչխարներ էին,
Իսկ սև հօտերն՝ ողջ այծեր էին.
Արածում էին սարերում, ձորում,
Խմում, լողանում պաղ-պաղ ջրերում։

Խառն հօտերն կտային իւղ, կաթ,
Գեղեցիկ գառներ և պանիր առատ.
Թէ տէր, թէ հովիւ, ամենայն սիրով՝
Կըպահպանէին նորանց խնամքով։

Այն ինչ սև հօտերն՝ սուր սուր պոզերով,
Ճիշտ միատեսակ՝ սև մորթիներով.
Եւ իրենց չար, վատ բնութեան համեմատ,
Աւերակ դարձնում այգիք, տունկ, արմատ։

Խեղճ հովիւներն յուսահատուեցին.
Իրենց տիրոջ մօտ աղաղակ բարձին.
— Ի՞նչ օգուտ են քեզ, այս քո սև հօտեր,
Ո՛չ իւղ, կաթ կըտան, և ո՛չ էլ ուլեր։

Դեռ կըպակասեն՝ չեն աւելանար,
Մեզ էլ կըտանջեն սաստիկ չարաչար.
Քանի որ նորանք արու տեսակն են,
Որքան էլ խնամենք՝ դարձեալ նոյնն են։

Տէրը երկար ու բարակ մտածեց,
Իսկոյն մի քանի մնագործ կանչեց.
Այծերը շուտով ցիր ու ցան եղան,
Խեղճ հովիւներն էլ քաղցր քուն մտան։

Նորանց փոխարէն ոչխարներ գնեց,
Իւղ, պանիր տուող հօտերին խառնեց.
— Զարերին՝ չարով պէտք է կործանել,
Արդիւնաբերաց՝ թիւն աւելացնել։

ԳՐԱՇԱՐՈՒԹԻՒՆ

Թէ ուզում ես գրաշար դառնաս՝
Այբ ու բենը լաւ պէտք է գիտենաս,
Հայ ազգի, Ռուսաց, Ֆրանսացւոց, Յունաց,
Պարսից, Վրացն էլ՝ չըթողնես ձեռաց:

Մի քանի ամիս ձրի կաշխատես,
Տառերի տեղը մինչև լաւ սովրես.
Եւ այնուհետև մի չնչին գնով
Պէտք է ծառայես ամեն մի ջանքով:

Քիթ ու բերանդ կըլինի մրոտ,
Աչ՛ես զգայ դու դեռ՝ ո՛չ համ և ո՛չ հոտ.
Յետոյ մի քանի բուբլի վարձ կառնես,
Կուտես կըխմես, լաւ-լաւ քէֆ կանես:

Քիչ-քիչ կստանաս դու պատիւ ու յարգ,
Կառավարչիդ մօտ չես լինիր անարգ.
Թէ ռոճիկդ էր մօտ տասնի, քսանի,
Յուսա՛ երեսնի շուտով կըհասնի:

Լուսամուտդ փակ, թէ գիշեր և տիւ,
Թէև շունչ կառնես՝ այն էլ թէ հազիւ.
Իբրև բանտարկեալ պէտք է աշխատես,
Ի՛նչ որ հրամայեն՝ իսկոյն կատարես.

— Այս մի գործը թող, միւսն սկսիր,
Մինչ այս ինչ ժամը տքնի՛ր, աշխատի՛ր,

Բայց երբ մի, կէս ժամ գործից ուշացար,
Ամնական ռոճկից իսպառ զրկուեցար:

Այդ կոպէկներով դու միայն կապրես,
Դարձեալ նոյնն ես, էլ ոչինչ չունես.
Թէ դու էլ ինձպէս գիտես Բաքոսին՝
Երկուշաբաթի վա՛յ քո սև օրին:

Տեսութիւնդ կարճ, օրերդ շուտ կանցնին,
Ոտքերդ տկար, կըբռնէ քամին.
Ընկերներիդ մօտ երկար չըկանգնես,
Նորանք կը կարծեն ծխախոտ կուզես:

Գործերդ թերի, գլուխդ տրաքվում,
Դավէրեա չունիս ո՛չ մի խանութում:
Քո աչքն էլ լոյս, գործատիրոջն էլ:
Գրաշարների կեանքն այսպէս է անցել,
Մինչև որ մեռել՝
Ու հանգի՛ստ պարկել . . . :

ԳԻՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Տեսքդ գեղեցիկ, իսկ շէնքդ յարմար,
Սենեակներդ մաքուր, ձմեռ թէ ամառ.
Ունիս գովելի պարտէզ զարդարուած,
Զորս կողմդ ամուր պարսպով պատած:

Դա՞ կանչողներդ երբէք պակաս չեն,
Որբ և այրիներ քեզ կը յաճախեն.
Թէ զրկող, զրկուող, աղաղակ բարձած՝
Դատաւորաց դէմ պարկեշտ են կանգնած։

Դատողն պէտք է խիղճ, խելք ունենայ,
Իրաւն ու սուտը՝ նա լաւ հասկանայ.
Կեղծ ու կաշառուած վկայք պակաս չեն,
Ո՛չ Աստծուց՝ ո՛չ էլ մարդից կամաչեն։

Թէ դատաւորդ խելքով մանուկ չէ,
Ամեն մէկին նա պէտք է ճանաչէ.
Թէ շէնքիդ յարմար դատ ու վճիռ կան՝
Պարծեցի՛ր ուրեմն այժմ և յաւիտեան։

Թէ ո՛չ՝ ափսոս են այդ քարեր, փայտեր,
Խեղճ ժողովրդոց աւելորդ ծախքեր.
Հաստապարանոց թէ մէկն եղաւ՝
Սև սուգը եկաւ, ամբոխին տարաւ։

—Դո՛ւք, դատաւորներ, ուղիղ դատ տեսէք,
Կըգայ մի օր որ՝ դո՛ւք էլ կըդատուէք . . . ։

—⁂—

Ա Ց Դ Ե Թ Ա Ղ

Ուղիղ ուղին ամիս քեզ խնամող եղայ,
Եւ ամեն հոգ ու վիշտ քաղցրութեամբ տարայ.

Մարտ ամսին հողի տակից հանեցի,
Ապրիլին կտրել, բրել ջանացի։

Մայիսի կիսում տուի քեզ մի ջուր,
Որ իմ հոգսերս չըդնան ի զուր.
Յունիսին հանեցի մոլախոտերդ,
Հնձեցի մաքուր՝ ամեն ճիւղերդ։

Յուլիսին էլ քեզ չըթողի ծարաւ,
Ուրախացայ, երբ խաղողդ հասաւ.
Հնձան շինեցի գեղեցիկ ձևով,
Այնտեղ ապրեցինք անփորձ, անխռով։

Օգոստոսին խիտ, թարմ ծառերիդ տակ,
Զովանում էինք արձակ համարձակ.
Սեպտեմբերի մէջ այգեկուրթ արինք,
Առատ խաղողդ սայլով տուն բերինք։

Հոկտեմբերն եկաւ, ձմեռն մօտեցաւ,
Համեղ խաղողդ լաւ գինի դարձաւ.
Եկաւ ժամը որ դու պէտք է քնես,
Ուղիղ չորս ամիս գերեզման մնես։

Բայց սա էլ դու լաւ պէտք է հասկանաս,
Որ դարձեալ անվարձ չըպիտի մնաս.
—Քո լցրած թողած գինու կարասից,
Ողորմիս կեչնեն ամեն բերանից։

Դու պարկիր այստեղ անհոգ, անխռով,
Վերևում յիշուած հաստատ պայմանով.

Մի կիսահոգոց վրադ կրկարդանք,
Մնացիր բարեաւ, կասենք ու կերթանք։

Մարտինդու նորից շունչ պիտի քաշես,
Նոր լուսին, արև, նոր աշխարհ տեսնես.
— Մարդս է՝ որ չունի ո՛չ թիւ, ո՛չ սահման,
Լռիկ ու ճնշիկ կերթայ դերեզման . . .։

ԿԻՐԱԿՈՍԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ա.

Նորա մտածմունքը.

Ուղիղ մէկ տարի Կիրակոսը նշանադրուած մնաց. նա շարունակ մտածում էր թէ ի՞նչպէս և ի՞նչ միջոցով հասկացնէր իւր ծնողներին — Խանդեալդուն ու Շամամին, որ հարսանեաց օրերն անցնում են, բարեկենդան օրերն էլ եկան մօտեցան. էլ ի՞նչ պէտք է անէր, կամ ո՞ւմ դիմէր իբրև միջնորդի՝ որ իւր ծնողաց հասկացնէին իրեն միտքը. երկար մտածելուց յետոյ ինքն իրեն ասաց.

—Էլ երկէն միտք անելը բոշ պրան ի, ըսկի մէկէն ընձի ճրաք չի կպնի, էլը կպնեմ նանայիս եախան, իշխոյ նշանտրէքեայ կլօխ պերեց՝ Աստծով, ումուդ (յոյս) ունեմ որ խառնիս էլ անել տայ։

Մի գիշեր գիւղում հարսանիք կար։ Կիրակոսը հաստատ գիտէր, որ իւր սիրած Նիգեարն էլ թէ իրրև բարեկամի, կամ իրրև նշանադրուած աղջկայ՝ անպատճառ այնտեղ կլինէր։ Ինքն էլ պատրաստուեց։ — տրեխները ոտքերից հանեց՝ կօշիկներ հագաւ, գլուխը մի նոր սև երկայն գդակ ծածկեց, ի հարկէ դորանց հետ էլ մի նոր արխալուղ, նոր չուխայ էր հարկաւոր։ այն էլ կարած պատրաստ կար։

Վերջապէս մի կերպ զարդարուեց գնաց ուղիղ հարսանեաց տունը։ երկար միջոց այս ու այն կողմն անցաւ, բայց ի զուր, դեռ ևս Նիգեարը չէր եկել։ մի ժամ չանցած՝ յանկարծ տեսաւ որ Նիգեարը մի քանի հարս-օրիորդների հետ պար բռնած խաղում էր։ շատ հնարքներ գործ դրեց որ կարողանար Նիգեարին մի քանի խօսք ասել, կամ ջէրում եղած միրգերից մի քանի բուռն նորան հասցնէր, բայց չը յաջողուեց, որովհետև Նիգեարի բարեկամներն երբէք չէին հեռանում նորանից։

Կիրակոսը տեսաւ որ բանը ինչ տեղն է, էլ աւելորդ համարեց այնտեղ մնալը, ուստի և տխուր ու տրտում տուն վերադարձաւ։ Բանը յաջող էր։ մայրը նստած ջահրայ էր մանում, իսկ Խանգեալդին արդէն խոր քնի մէջ էր։ Կիրակոսը ոտքերը կախ արեց թունդիրն, ձեռքերը խաչեց, սկսեց շուտ-շուտ ախ ու վախ քաշել, հոգոց հանել։

Բ.

Շամամն ու Կիրակոսը։

Շամամը երկար դիտելուց յետոյ՝ ասաց։

— Կիրակոս, ա՛յ բալամ, ընչի՞ ես էտէնց մալուլ, մուշկիւլ, մառ-մուռը կախի։ փառք Աստու, ի՞նչ ի ըլի, նանատ սաղ, բաբատ սաղ, տղները սալամաթ, էլ քեզ ա՛խ-վախը ի՞նչ ի։

Կիրակոսը փընթփընթալով ասաց։

— Զաթի դառդերիս մէկեայ տիու ես, մէն էլ բաբաս։

— Գեա՛դա, բա քեզ դառդը ի՞նչ ի։ չըլի՞ Նիգեարն ի միտըտ ինգի։ գինամ, էն էլ խառնիս էկած կըլէր։ ընչի՞ տիու շոտ էկար։ մէ պծառ խաղասէր, Նիգեարի խետը զուռցասէր, յանագ, մանագ անեսէր, նոր իկեասէր։

— Խա, Նիգեարը հէնց մենակ էր՝ որ խետն էլ զուռցամ էր, խայիր շուն, շանգեալ կար խետը։ էլ խալխի պերանն էլ պռնել չըլելի, ըլօղ, չըլօղը ասելի։ — Կիրակոս, բաբատ ընչի՞ քեզի չի փսակելի։ շատերն էլ ասես են, որ փոշմնցիր են, էլ չեն ուզելի ախչիկեայ քեզի տան։ Տո՛, եանամ խայիր թուռլու խօսկ են ասելի, մառթ չինալի վարի՞ ջուղարը տայ։ — մէ տարի էլ ախչիկ կուզեն, նշան կըտանեն՝ չեն փսակի։ էրվալի որ էս տարի էլ կըմնայ։ կլօխ իկեալու պրան չի։

Շամամ։—Զէ՛, չէ՛, ա՛յ բալամ, էտէնց էլ պրա՞ն կըլի, մենք խօ օխտը աշխարքի մէջ խաղք, խայտառակ չե՞նք ըլի։ ել, կլօխտ տի՛ր քնի, կանոխ

տես ի՞նչ օյին կըխանեմ բաբայիտ կլօխ ա. էլ, առխային մոկ տեղա։

Կիրակոսը քաղցը քնի մէջ էր, որ Խանգեալ-դին մի քանի բարձր հաղալուց յետոյ, քունը փախաւ, ձայն տուեց կնոջը.

Գ.

Շամամն ու Խանգեալդին.

—Շամամ, Շամամ, մէ պուտ ձուր խասու որ պերանս շատ ի չոռցի. տնաշէնի՛ կնիկ, է՛լ, քեանի՞ նստես, մկայ վարտէ վորայի՝ այհլոր.քերը կը կանչեն. լոս ի, է՛լ։

—Դառդէ խաբար չես, հէնց ասես ես՝ է՛լ քնի. բա չի՞ս էր լսելի, լաճը ի՞նչ էր ասելի. ասաց Շամամը։

—Ի՞նչ էր ասելի, եօխսա Նիգեարն էր միտը ինգի. չի ամչընալի էլ էտ գեադան. պատասխանեց Խանգեալդին։

Շամամ. — Եաւաշ, մէ սըհաթ հէնց էն քեօրփան զատ չասի. կօ էկաւ տարին պոլըրաւ, կանոխ ցրտերը կինեն, ծեռ ծոցէ խանել չի ըլի, զատ տեղեր պըարեկամքեր ունես, ճանանչքեր ունես, քեօ կանչող, պըան խօքացող ա վա՛ւ ի. ինչ ասել՝ խալխի պերանն էլ պռնել չըլելի. խազար չէշիտ խօսք են ասելի. եանի, քիչ ի մնալի որ մառթ անկեաճքերը բռնի, ըսկի զատ չըլսի. շոտ թէ ուշ՝ տկի փսայվեն, թողնելով ի՞նչ կըլի. վախտով ինչ անելու ես՝ արա՛։

Խանգեալդին. — Հալա մէ մառթ չըկայ, որ ասի. էտ ընչի՞ն ի, եարաբ, որ քեօ խելքեայ կը-ռելի, ամա՝ իմը չէ. մայեար քեօ բարան էլ խելք չունեմ. ինչ աղէկ որ պըարի աշկօվրտ տնաս ես, մդայի դամ դինջուրթեն չունեմ, մէնակ մառթ, խայիր ցաւ. պըանը խելքով կըլի՞ եօխսա՝ զօռով. ախար ըմեն պըանին վախտ կայ, քեանի կար՝ կա-լի, կըտի խետ, դարէն ետ՝ ինգեանք էքինները քաղել, թաղելու. դարէն ետ՝ դը եա՛ր, աշնան վար արա, ցանք ցանի, ղըշմար աղա, մաջալ չունեմ որ ծեռս տանեմ կլօխս քեօրեմ. տիւ էլ մէ թիսէն ընձի ճիստիր ես շիշա. քեանի կար՝ զահլաս տա-բար, մասալաներով, շարադաներով խասկըցուցիր.— ա՛յ մառթ, էտէնց ի, էնէնց ի, բէյնս տարար, նշան տիր. միայ էլ՝ էրկու ոտրտ մէ սօլ ես ճիստի, — դը շոտ արա՝ փսակի. բա չի՞նալի, էշ խեծնել ա մէ այիր ի, էշնել ա՝ էրկու. Ասված ողորմած ի, էն էլ կըլի, մի վախեցի. է՛լ կլօխտ տիր քընենք. ծի առնողը՝ առաչ մնուրքը կը կապի. կընկան որ խելք ըլի, սարբը դարարը ըլի՝ ծամերը էտ ղըդա էրկի՞ն կըլի։

Շամամ. — Էլ զալաթ կանեմ, չեմ զուռցայ, զատ չեմ ասի, տիու գինաս քեօ տղան՝ քեօ խելքեայ, ի՛նչ կանես արա. մայեար Ասված խելքեայ հէնց մէնակ մառթո՞ւն տուեց. կնիկեայ որ չըլի, մառթու հալը ի՞նչ կըլի. իշխոյ բազի մառթ, որ կուզի մէկին անիծի, կասի, «անկընիկ մնաս», եանի տունտ քայվի. տան չէն, աւեր ա՝ կընկայ կըլխի վը-բան ի, մայեար տիու կընկան պըանի տեղ չի՞ս անելի։

—Ե՛լ, ե՛լ, ասես եմ, էտ իմ պլանն ի. քեռ կոկոյի (գլխի) պլանը չի։ Երեք անգամ երեսը խաչակնքեց ու ասաց. Իսո՛ս Քրիստոս Աստած, տիու պլարի միտք, պլարի խորհուրդ տաս. ասաց ու գլուխը դրեց բարձին։

Առաւօտը դեռ նոր էր սկսել լոյս ու մութը բաժանուել. Խանգեալդին լուացուեց, աղօթեց ու գնաց գիւղի մէջ, մի փութ միս առաւ ու տուն վերադարձաւ։

—Շամամ, եա՛ր տես, ի՞նչ թավուր միս եմ պերի, քերֆթայ, դօլմայ, շորվայ, քաբաբ, վարէն որ ասես կըլի. օսօր մաքիս ճոյ պլան կայ. ե՛լ, վախտով ինչ անելու ես՝ արա, ես ճոյ տեղ եմ էթալի, մղայի ճնայ կիկեամ։

Շամամը ուրախ ուրախ շարունակեց իւր անելիքն. ձայն տուեց Կիրակոսին, որը դեռ քնած էր.

—Ե՛լ բալամ, բոլ ի քընես, կէս օր ըլաւ. բաբայիտ էն պլանք պլաներն եմ ասի, որ էլ չըլաց. բոլ միս ի պերի, թամբահ արեց խօրօտ խօրօտ կերակուլքեր էփեմ. էրվալի որ մաքին պլան կայ. ե՛լ տավարին եմ տու, չիկեայ ջիրոտնայ։

Կիրակոսը վեր կացաւ, սկսեց շուտ-շուտ շորերը հագնել. դառնալով դէպի մայրն ասաց.

— Նանա՛ ջան, գինամ որ էլը տիու մէ ճար կանես, բաբայիս զատ կըխասկըցուցես, եօխսա վի՞ր դառդն ի կտրուվի որ ասի, տարին թըմըմվաւ, հալա էն խեղճ Կիրակոսը նշանլու ի. զուրբա՛ն նանայիս, ինչ յունար ունես՝ խարջի, ես էթաս եմ փայեան։

Շամամը ամեն ինչ պատրաստել էր, որ Խանդեալդին ցրտից ձեռքերը մէկմէկու շփելով տուն վերադարձաւ։

— Զօրանա՛ս, Շամամ, էս խեա գինամ որ հալա ջահել ես, չես պառվեցի. իրեք կընիկ չէր բաշարի էտ ըմեն պաները մըղայի դամ հաղրել։

Շամամ — Ընչի՞ թռանայ (ոնաղ) չես անի, բախտավոր կլօխս, նոր թազայ խարս եմ ըլի. եքեայ տուն ի, խայիր էթացող, իկեացող կայ, մէ պսպօր չըկայ, որ մէ պլանի ծեռ խասուցի. ասես եմ՝ ջիրոտնաս ես. մէ սհաթ դնջուում չունեմ ես էտ հալիս, նոր սափոր վերցնում ճուրը էթամ, աւել անեմ, թոնդիր վառեմ, խաց թըխեմ. մէ կիւնտ անող պերող էլ չըկայ. ընչի՞ միայ աբկի մէ կարմիր, կըլըմբոզ խարս էլ քեռ տունը չըլէր, ըմեն պլանի էլ ծեռ խասուցէր. տիու էլ ուրախանաս էր՝ ես էլ. իլլահի Կիրակոս ա, թեւերը վեր վերցէր տըռճըկօլ անէր, լազգըվար խաղար։

— Հարնայիտա, ախբը ա քեռ ասածը արիր, պլանէ պռծի, Կիրակոսին մէ կանչի թող իկեայ։

Շամամը խընդալով՝ ձայն է տալիս Կիրակոսին. — Կիրակոս, բալամ, գինամ որ տավարէն պռծիր ես, էլ ընչի՞ մէնակ նստիր ես տաղ. բաբատ շոտ կանչելի, էլ մի՛ ուշացի, էրվալի որ միտք ունի քեզի քեռ մուրաղին խասուցի, մեր հասան էլ պռծնի քեռ ծեռէն. դէ շոտ արա՛, տուն եար։

Երկու բոպէ չանցած՝ Կիրակոսը պատրաստ կանգնած էր Խանդեալդու դիմաց և սպասում էր նորա հրամանին։

Խանգեալդի. — Շամամ։

— Ասա ըշկանք.

— Եար նիստ, քեռ ասածի պէս ա՝ դավայ (ուղտ) խեծնող ա՝ կուզէ կուզ շուռ չիկեայ. ինչ որ մնաց, ինչ որ ըլաւ՝ բոլ ի, իմ միտկեայ էն ի, որ օրոխկեմ մեր քաւոր Նազարին կանչել տամ, մէ մասլըհաթ անենք, խելք խելքի տանք. քեռ ասածն էլ սուտ չի, էտ տաք օրեր ա, հավաներ ա (եղանակ) կէթան մեր ծեռէն. մկայ տիու ի՞նչ ես ասելի տար տիմանց։

— Թամամ մէ տարի ըլաւ, որ բոռաս եմ, այ մառթ, պըտանը էտէնց ի, տիու հանաղի ես սայմըշելի. կանչի թող իկեայ, ալլահվաքիլ, էն մառթ ա մեր օղուրին շատ ի չարչըրվի, էն օրվըկէն օսօր՝ մեր թեխ ա ոտ չի թալի, մէ կտոր խաց, եա մէ թաս կինի չի խմի, իշխոյ զինքեայ՝ էնենց էլ կընիկեայ. կանոխ դարն էլ ուր գեօրայ ցաւ ունի, խառջ ունի, մեզի ի՞նչ որ պարտքընտէր ի. տղան խասիր ի, եաւաշ եաւաշ կըտայ. ա՛խ, անտէր մնայ էտ կինին, կինի չըխմէր՝ մկա տաս խազար մանէթ փող ունէր։

Խանգեալդին.—Թող, տըանք ուրենց վախտին։ Կիրակոս, քաւորը հէնց նոր թեխ ուրենց տունն էր էթալի. քե՛լ ասա, քաւո՛ր Ջան, բաբաս զինքեայ տըկի իկեար, ամա ճոյ պան ուրթնաւ՝ ընձի օրոխկեց. ասեց որ, ասա խաց չուտի, իկեայ մեր թեխայ, մէ քեանի խօսք ունեմ ասելու։

Կիրակոսը ուղիղ էն ժամանակ հասաւ քաւոր Նազարենց տունը, որ իրաւ, կամենում էր

հաց ուտել. պատմեց հօր ասածներն առանց թերութեան։ Քաւոր Նազարը իսկոյն հասկացաւ թէ ինչ կայ, փընթփընթալով մտքումն ասաց.

—Կո էտէնց կըլի, ընչունք օսօր չէր ասելի,

— Ավդալ, էշըտ վարտէ ես կապի. գինամ կուգի խառնիս անի, ծեռերքերդ մէ քեանի շահի, փարայ կայ, էն էլ դանց օղուրին տըկի խարջենք. ամա ջահնամ ա, էս տարի էլ էտ զահրըմար կինին շատ թանգ ի, կարասը օխտը մանէթ. հէչ օրմասա՝ մէ ամիս՝ կուտեմ կըխմեմ, քէֆ կանեմ, երկու իմ խարջածի գեօրայ ետ կըբերեմ։ Էլը ճանս ալչու կայնաւ. էս խէտ էնէնց չեմ անի, որ թոնդիրն ինեմ։ Սանամ, սօլերս պէ ըշկամ, մեր սանախէր Խանգեալդին կանչիր ի. դար խաթրէն ի՞շխոյ ըլեմ։ էլ խաց մի՛ պէ, ասաց ու ճանապարհ ընկաւ. տուն մտաւ թէ չէ՝ տեսաւ որ ամեն բան պատրաստ՝ իրեն են սպասում, ծիծաղելով ասաց.

—Պարաճողում ծեզի, սանախէր, սանամէր։

—Ա՛յ տիու մեր աշկին, մեր կլխին էկար, եար նիստ մէ ըշկանք. վաղուց ի որ մէյ մէկիու չենք տըսի, նիստ մէ սհաթ զուռցանք. Շամամ, էլ տիու մեզի մի ըշկա՛, պռծի, մեզի խմա խաց, կինի պէ. ես իրկունն էլ խաց չեմ կերի, շատ քաղցած եմ։

Դ. Նազարն ու Խանգեալդին.

Նազար. — Քեռ տունը Ասված շինի, ընչիուկ ենի խեղճ սանամէրը մենակ չարչըրվի, դէ շատ արա խարսը պէ, էն էլ թող մէ դինջանայ, խեղճ ի ախըր։

— Աստված վկայ ի, տիու շատ խելացի մառթ ես, ի՞նչ իմացար որ հէնց տար խմա եմ կանչի քեզի. խաց կէ, մէյ մէկ թաս էլ կինի խմենք, ըշկանք, պըանը Աստված. ասաց ու բաժակները լցրեց. — քաւո՛ր Նազար, մէյն ընէի՝ մէյն էլ քեզի. խմենք Աստված զինքեայ պըարի միաք տայ։

Բաժակները մի քանի անգամ կրկնուեցին՝ մինչև որ գաւը դատարկուեց առանց մի հաստատ պայմանի։

Նազար. — Սանամէր, էտ ըստաքանքերը տէտ կուրսըվեցու, զուլան լինքեայ կինի լից պէ, մէ խորօտ էլ Եուվայու սըվտակ քեռասայ. ընչի, տիու իմ դայդան չեմնալի. պաղ երկաթ թափելով զատ չի ըլի, կլօխքերս տայհնայ ըշկանք ի՞նչ պըանի վըրայ ենք, ի՞նչ ենք գուռցալի։

Շամամը ուրախութեամբ կատարեց քաւոր Նազարի խնդիրը։

Խանգեալդին քերեղանը լցցրեց ու ասաց.

— Քաւո՛ր Նազար, փառք Աստու, տիու ըմեն պըան գինաս առանց ասելու. ամա թող ըլի, ասել զուռցալն էլ ամօթ պըան չի, զաթի տար խմա էլ կանչիր ենք քեզի. տիու աղէկ գինաս, որ քեզնէ զատ չենք պախի, վադան էկիր ի, կուզենք եաւաշ եաւաշ խառնիսի թադարուք աբսնանք. մեր խընամի Շահբազն էլ թող խաբար ըլի մեր մասլըհաթէն. քեռանըմ, ընչըմ անենք, որ էն մառթն էլ ուր թադարուքեայ ասնայ՝ էտ քեօրլուղը քեզի վրայ ենք թալելի, մկայ տիու գինաս. քեօ բըռլեանդ կենաց ա, ասաց ու շուռ տուեց. մէկն էլ տուեց քաւոր Նազարին։

Նազար. — Էտ մէ քեռասան հալա իմ կենաց ա՝ որ տիու խմար, մէյն էլ տու քեօ կենացը խըմեմ, էտ մէյն էլ՝ քեօ խնամի, իմ ախպէր Շահբազի կենացը. Աստված դարն էլ պըարի միաք տայ, քեզ էլ, որ մէյմէկիու խետ քաղցր, խամով, խոտով եօլա էթաք. ես իրկունը Շահբազին կըտըսնամ, ծեզի մէ խէր խաբար կըպերեմ, կօ ըլամ։

Նազարը գնաց ուղիղ իրենց տունը, կնոջը պատուիրեց ասելով.

Ե.

Նազարն ու Թազագիւլը.

— Թազագիւլ, ես կօ քընես եմ, իրկվան զանգերը որ կըզարկեն, ընձի ծէն կըտաս, տեղ ունեմ էթալու։

Թէ շատ՝ թէ քիչ, Նազարը քնեց. յանկարծ եկեղեցւոյ զանգակները խփեցին. Թազագիւլը որ լաւ գիտէր Նազարի բնութիւնը, մանաւանդ խըմած ժամանակը, նորա հրամանը պէտք է կատարէր. մօտեցաւ նորան, ձայն տուեց ու ասաց.

— Է՛յ, է՛յ, ելլ, մութն ի, ժամերը զարկին. ախըր տիու ասիր, որ ընձի իմաց տու՝ տեղ տըկի էթամ։

Նազար. — Վա՛յ նոր միտս ինգեաւ, է՛յ, ինչ աղէկ որ զարթուցիր, եոխսա ամօթով կը մնամ էր, էն մառթները ընդմով առխային են։

Թազագիւլ. — Աղուորթ հալա, կէսօրին քէֆըտ աղէկ էր, չուզիմ զուռցացուցեմ. մէ ասա ըշկանք,

էլ էտ մթան ա, իւր տըկի էթաս. համա չընեղա-նաս, որ խարցուցիմ տիու դինաս։

— Նազար. Ի՞նչ նեղանամ, չեսնալի սանախէր Խանգեալդին ընչի՞ էնէնց նեղնը կանչիր էր. ախար մէ քեանի օր էլ որ ըսնի, էլ փսակի հրաման չէն տայ. ընձի կանչիր էր որ էթամ Շահրազին իմաց տամ, որ ուզես են էթան՝ ըաշլըղ, քեասըմ, ըիշըմ զուռցալու, ռադ անեն. որ ըմեն մառթ ուր թաղպիր ա տըսնայ։

Թաղագիւլ. — Ա՛զբաթը խէրի մառթ, նշան-տրէքին՝ թոնդիր ա ինգեար, վախենաս եմ խառ-նիսին՝ ճըրխորն իյնես. էթալու խմա ես զատ չեմ ասելի. մեղի էլ տըղայ ունենք փսայվելու, ծե-ռը՝ ծեռ կը լըվայ, էրկուսն էլ՝ իրես. քել, ամա մղայի քիչ խմի. տնա՛շէնի մառթ, կինին հօ քեզի արքայութեն չի՞ տանի։

Նազարը դժուարանում էր պատասխան տալ, քէֆը թոդել էր, գլուխն էլ սաստիկ ցաւում. կինն էլ նստել՝ Աւեսարան էր կարդում. հաղիւ կարո-ղացաւ ասել.

— Զէ՛, չէ՛, էլ էնէնց չեմ անի, առխային ելա-սաց ու գնաց գիւղի մէջ, որտեղ Կիրակոսը խոսքով էր բռնուած, ձայն տուեց.

Զ.

Նազարն ու Կիրակոսը.

— Սանիկ Կիրակոս,

— Էն ի՞նչ ի, քաւոր աղա։

Նազար (Առանձին կանչելով). — Ախար էն վախտ ա՝ ինգեանք զրոցով, նա ե՞ս ֆահմամ նա էլ բաբատ. մէյ որ՝ կլօխս շատ ի ցաւալի, խելք չի մնացի, էթամ աներանցը ի՞նչ զուռցամ. մէյ-նէլ՝ որ տարտակ էթալ չըլի, ամօթ ի. ըսկի որ չըլի, մէ զուլայ կինի էլ խեռս չտանեմ։

Կիրակոս. — Բաբաս տունը չի. որ էտէնց ի, եար էթանք համ կլօխտ սաղացու, համ էլ մէ լուլահին աղէկ կինի տար խէաբտ. ամա քաւոր ջան, էլ ի՞նչ ասեմ, տիու դինաս, խելքըտ ինչ թաւուր կը կռի՝ էնէնց էլ արա։

Քաւոր Նազարը խամ մարդ չէր, նա ամեն բան գիտէր. հէնց որ մտան շիրախանէն՝ հարցրեց.

— Սանիկ, բա նանա՞ իւր ի.

— Ընձմէն սավայի՝ էլ ճոկ մառթ չըկայ տու-նա. իշղըդա կուզես խմի, տար, տիու դինաս. իմ մընաթ ա էտի որ՝ ես ամչընաս եմ բաբայիս կուշ-տը զուռցամ. մէ պծառ զայրաթ արա՛, զըմեն փը-սայվան, մենակ ես եմ մնացի. դինամ, առաւտունն էլ կլօխտ կը ցաւայ, տիու քել աներանցս թեխ ա, ես մէ իրեք, չորս ջռայ (ջղուղ) կինի կը խասու-ցեմ ձեր տուն ա, ինչ վախտ որ կլօխըտ ցաւայ, խմես որ սաղանայ։

Նազարը շտապելով, մի գուցէ վրայ հասնեն ամօթ է.

— Հա՛, զուրբան սանիկիս կլխին, շոտով քե-զի քեռ մուրաղին կըխասուցեմ. գաւը վեր առաւ որ գնայ. — Սանիկ, ջռանները մտէտ չէթայ, հա՞։

Նազարը հասաւ Շահրազէնց դռան առաջ,

ձեռքի փայտով դուռը հրեց հետն էլ ձայն տուեց.

— Ախպէր Շահրազ, եարաբ տո՞ւնն ես։

Շահրազ. — Վա՛յ Նազար Ջան, տի՞ուռ ես, նես եար։

Է.

Նազարն ու Շահրազը.

Նազարը տուն մտնելով՝ բարև տուեց ու ասաց.

— Էլ չ՚ես ուզելի անէն տիուս իկեաս. ասա ըշկանք, քէֆըտ, հալըտ, ինչ պրանի ես.

— Ջանիտ սաղուԹեն, ասաց Շահրազը. իմ պրանը չ՚ենալի, ուտել, խմել՝ քէֆ անել. դարմէն սավայի՝ փառք իմ Սաեղծողին. ի՞նչս ի պակաս. խոռակ կայ, կինի կայ, առտերը ցանիր եմ, էքին խորիր եմ. քեռ դալվաԹէն՝ ըսկի զատի պակասուԹեն չունեմ. հէնց ինգեր եմ ուզելի, որ ուտենք, խմենք. աշխըրքի մալը՝ աշխարք կըմնայ. — Սանամ, խաց պէ, կինի պէ. տարին Թըմըմվաւ, որ ախպէրըտ էկիրի մեր տունը, աղեկ պատիւ հորմաԹ արա։

Սանամ. — Իմ Ջուխտ աշկիս վրանի էկի, տիուք կերէք, խմէք, քէֆ արէք, ինչ որ ուզէք՝ հազըր ի, մի՛ վախեցէք։

Ֆաւոր Նազար. — Ախպէ՛ր Շահրազ, աղուորԹ ասիր որ տարին դըզվաւ, ինչ նշանտրէքին եմ էկի, կո մկայ էլ խառնիսն ի. էտ ալամ աշխըրքեօվ ի, մենակ ընձմով, ծեզմով չի. ըմեն պրանին վախտ

կայ, զայդայ կայ. քեռանի մեր խելքեայ մեր կլօխն ի, ասենք, զուռցանք, եարի ուտենք խմենք.

— Տիուռ աղէկ զինաս մեր Խոյեցիների մէջ ա զանուր, զայդայ կայ, ախչիկ, աղայ փսակելու խմա. ճոյ տեղ՝ աղայի տէրն ի ըաշլըղ (վերադիր) առնելի. ամա մեր մէջ ա՝ ախչըկայ տէր ա. մենք մեր խօրերէն պապկըներէն էտենց ենք լսի, տըսի՝ ուսի։ Ես էկիր եմ քեզի իմաց տամ, որ կանոխ իրկուն, մեր սանախէր Խանդեալդին ուր պըարեկամքերով քեզի զօնաղ ի, թէ տալ, թէ առնել, ըմեն պրան վերճացուցէք մէ քեռանի խօսք խասկըցող մառթների ծեռով, որ էն մառթն էլ արխային էթայ ուր բաղարլըղ ա անի, տիուռ էլ քեռ թադարուքեայ տըսնաս. սար, սաղամաթ՝ տար խըմայ եմ էկի, մկայ դօր ա (հերթը) քեռնն ի, ինչ ասելու ես՝ ասա, որ մէ սաղամ ջուզաբ տանեմ էն մառթին։

Շահրազը մի քանի բոպէ մտածելուց յետոյ.

— Ախպէ՛ր Նազար, իշխոյ Եւայ, Ալթամէն մեզի մնացիր ի, ես էն զայդայ, դանուրէն տիուս չեմ իկեայ. իշխոյ ալթալար ա՝ (նախնիք) ասիր են, խալիսը ընցնող կարմընջէն՝ տիուռ էլ ընցի։ — Կանոխ իրկվան խմայ շատ չեմ ասի, անխոս խինդ ըղըրը միս, վեց ըղըրը կինի կուզեմ։ Վերց խաց ուտենք, կինի խմենք ասենք, Ասվաց զինքեայ փոշմանուԹեն չըտայ։

Նազարը, որ գիւղի սովորուԹիւնից լաւ տեղեակ էր, բաւականացաւ. բաժակը ձեռքն առնելով ասաց. — Էտ կինին խմես եմ էրկու խնա-

մինչերիտ կենաց ա, իշխոյ ասիր են, խասկըցողի խետ՝ քար քեաշի,—խեռի ծեր սուրբ իրեսէն—անկէտի խետ ա՝ փլաւ մի՛ կէ։ Փառք Աստուս, որ էրկըսով էլ հարգ ճոկեօղ էք, ասաց ու կուլ տուեց. տեսաւ որ ոչինչ չելաւ՝ կրկնեց.—Շահբազ Ջան ախար էրկըսիտ կենացն եմ խմի, էտ քեօ կենաց ա, բա քեօ խնամի Խանգեալդունն։ Տիուք էն մառթներէն չէք, որ էրկըսիտ կենաց ա մէ թասով խմենք, էտ մէյն էլ դար կենաց ա թող ըլի։

Շահբազը ծիծաղելով, — Սանամ մէ խամ քեասայ պէ տաղ, մայեար իմ խնամին փտիկ մառթ ի, որ ստաքանով խմենք դար բըռլեանդ կենաց ա։

Սանամ. — Առէք քեասան, հալբաթ որ մեր խնամին ափսոս մառթ ի. կուզէք՝ մէ ճոչ բալէն (կովկիթ) պերեմ, դարմով խմէք։

Նազարն ու Շահբազը համաձայնեցին որ՝ մի մի կովկիթ խմեն և ինչ կենացներ որ պէտք է առաջարկեն՝ բոլորն էլ թող նորա մէջն լինի. կովկիթը լիքը լցրին։

Նազար. — Ախպէր Շահբազ, առաչ տիու խըմի, չունքի ծեր տունն ի, շատ որ էն տեղը ինի, տեղմըտեղ կըքնես. ամա իմ ճամբախը զատ ի, անջաղ տեղ խասնեմ, էն մառթու աշկն էլ ճամխու ի, ամոթ ի։

— Շատ աղորթ ասիր, ինչ կենաց որ խըմանք, ինչ էլ որ տըկի թաղաղան խմենք՝ թող բիրադի ըլի էտ բալէնի մէջ ա. ասաց ու քաշեց գլխին, հալիւ թէ կէս արեց ու վեր դրեց։

—Նազար Ջան, շատ զօռ ի, նափասըս կըտըռվաւ. քեռ տուն ա Աստած շինի. ֆինշացնելով ասաց ու ճնացածն էլ վերջացրեց։

Թէև խմողը Շահբազն էր, բայց սարսափը Նազարին տիրեց, կովկիթը վեր առաւ.

— Թող քեռ ասածը ըլի, ախպէր Շահբազ, ըմեն կենաց էլ տար մէջ ա ըլի. եա՛ փիր (Բաքոս), աչքերը խփեց, զուռնաչու պէս մի երկար շունչ որ չքաշեց՝ կաթիլը կտրեց. հալիւ ոտքի կանգնելով բարի դիշեր ասաց ու գնաց։

Ը.

Նազարի պսակը.

Քաւոր Նազարը թէ ի՞նչպէս հասաւ իրենց քուչի դուռը՝ այդ միայն Աստուած գիտէ. մի կերպ քարով, փայտով, սկսեց դուռը ծեծել. երեխաներից մէկն գալիս է տեսնում որ իւր հայրիկն է, հալիւ դռան դէմ եղած՝ կանգնած էր ասաց.

— Բա՛բա, ընչի՞ ես կայնի տաղ, նե՛ս եար։

— Քեզ, նանայի՛տ ասա թող իկեայ։

Երեխան վազելով տուն գնաց ու մօրը պատմեց հօր դրութիւնը, թէ ի՞նչպէս դողդողալով՝ մի ձեռը պատին քցած, իսկ միւսով դուռը բըռնած օրօրվում էր, տուն գալ չէ ուզում. ասաց —որ մօրդ ասա թող գայ։ Թաղադիւլի ճարը կըտրած՝ փընթփընթալով գնաց դէպի քուչի դուռը. Նազարի դրութիւնը տեսաւ թէ չէ՝ իմացաւ քանի՞ երրորդ աստիճանն էր հասել՝ ասաց.

— Էտ էլ թաղայ զայդաֆ ես գիդի, որ պակի դուռը թփես ես. էտ էրկէն ճամբաս ա էկիր ես, միայ էտ զդայիկ տեղ ա չէ՞նալի իկեալ։

— Հալա մէ ծէն տու թոդ ճիժ, պիժ զըմընով էլ իկեան՝ զատ տըկի ասեմ, մէ աղէկ պըան ի ինդի միտս, ասաց Նազարը։

— Քեռ՝ սիրաը չըմեռնի, կէս քըշեր, տըղները տըկլոզ (մերկ), ցրտու տոզաս են, ի՞շխոյ իկեան. նե՛ս եար, ինչ ասելու ես՝ ասա։

Նազարը շատ խնդրեց, աղաչեց Թազադիւլին ասելով.

— Տիու չէ՞նալի, մէ ճոյ պըան ի միտս ինդի, ման օլում, ասա՛ թոզ իկեան, կանոխ մտէս կէթայ՝ ափսոս ի։

Թազադիւլի ճար, հնարը կտրուած՝ երեխայոց ժողովեց բերեց քուչի դուռը.

— Դէ՛, կո էկան տըղները, ասա ըշկանք ի՞նչ ես ասելի։

— Ասեմ՝ այ կնիկ, մէ ծեռէս դայիմ պոնի՝ որ չինեմ տըղներ, տիուք էլ՝ ուռա՛յ, կեցէ՛ք բռացէք, զալմըզալ շամաթայ անելով, ճափ զարկելով մեզի տուն տարէք, հէնց իմանանք որ նոր ենք փսայվելի. մեր փսակը եռսուն տարի կըլի, խնացիր ի, քեարթուլայցիր ի. Թազադիւլ, մըննաթ եմ անելի չընեղանաս, ջահելութեն ա միտս ի ինդի. ընչիուկ էտենց քէֆով չտանէք՝ աղորթը ասեմ չեմ իկեայ։

Խեղճ Թազադիւլը մնաց մոլորուած, ի՞նչ անէր, եթէ հակառակէր՝ Նազարի բղաւոցից դրա-

ցիք պէտք է ժողովուէին՝ ամօթ էր. թէ դուրս թողնէր՝ ցրտից կըմեռնէր. ի հարկէ ամեն օր այդպէս չէր պատահի. ստիպուած՝ ասաց.

— Տը՛ղներ, բա՛լաներ, Աստու խաթըր, ինչ որ ծեր բաբան ասելի՝ էնէնց էլ արէ՛ք, ճարն ի՞նչ ի։

Նազարի սրտովն էլաւ, սկսեց հազար տեսակ ձայներ հանել, երեխայոց քէֆն էլ եկաւ. սկսեցին զանազան տեսակ խաղն ի խուռն ձայներ արձակել. հա՜, եալլա՜հ կանչելով՝ մեր նոր հարս ու փեսային տուն տարան։ Նազարն էլ չըկարողացաւ շորերը հանել, հաղիւ գլուխը դրեց բարձին. էլ մեզ յայանի չէ, նո՞ր էր մեռել՝ թէ հինգ օր առաջ։

Թազադիւլը մնաց ա՛խ ու վա՛խ անելով. ի՞նչ անէր, լաց լինէր՝ թէ ծիծաղէր վերջապէս ինքն իրեն ասաց.

— Բախտավորը ուզելի մեր կլխին Թազադան Ջահելանայ, փսայվի. ինչ թաւուր խօսքեր ի ասելի, մա՛ն օլում, իմ արեւը կըսիրաս. բաւէ զօռէն խասիր ի (ծնողաց դերեզմանին, ծօտեցել է) էլը կուզի առսըզութեն անի. այսպէս շատ խօսքեր ասելով՝ վերջապէս ինքն էլ քուն մտաւ։

Աքլորները մի, երկու անգամ կանչել էին, որ Նազարը մի քանի ամուր հազալով՝ աչքերը բաց արեց, տեսաւ որ ի՞նչ դրութեան մէջ է, տնքոց վռչոցն սկսեց.

— Ա՜խ, մեռնես եմ, վա՛յ մեռամ, կլօխս պատրուաւ. մէ թաս զահրըմար ըլած արաղ, կինի էլ չըկայ, որ խմեմ բալքի մէ պծառ աղէկ ըլեմ. բա ի՞նչ անեմ։

Յանկարծ մի տղղոցի ձայն է լսում։ Նայում է որ Թաղագիւլն է, ջահրայ է մանում, ձայն տուեց։

—Ա՛յ կնիկ, նանայիտ, բաբայիտ շատ եմ քեաշում տըվի, կըբաշխես։ Էս խեռ՝ օղորմի կըտամ, մէ ճար, մէ իլլաջ արա՝ որ մեռնես եմ։ Էլ կլոխս քարը կըտամ, էտէնց դալաթ չեմ անի։

Թաղագիւլը չէր ուզում մինչև անգամ պատասխան էլ տար, բայց Նազարի ախ, վախը լսելով խղճահարուեց։

— Է՛յ, քեզի որ մէ դօլու կինի տամ, էլ հօ էտէնց անխամութեն չե՞ս անի։ ախար ամօթ ի, այիբ ի։ տիու էլ դօստ, դուշմանի տէր ես։ Նշանտրէքին Թոնդիրա ինգեար, կլոխտ կոտրուվաւ, ենեամ, ի՞նչ Թաւուր Թաւուր օյինքեր էկաւ կլոխըտ, մկայ էլ խառնիսն ի։ խալիսը դհօլ զուռնան տըկի Թողնեն՝ իկեան քեզի Թամաշայ։ վա՞ր մէկեայ ասեմ, ընչի, տիու չե՞ս ֆահմելի։

Նազարը այդ ամենը ուշադրութեամբ լսում էր ու մտքումն ասում։

— Ի՛նչ ասելի՝ Թող ասի, Թայհլան մէ դօլու կինի, եա մէ ստաքան արաղ տայ խմեմ։ Հէնց ինչ որ ասի՝ կասեմ աղուորթի, ա՛յ կնիկ, քեռ ասածն ի։ եաւաշ մէ պինդ կպնեմ եախան ըշկանք։ Համա մեր տունը կինի չըկայ էտ դո՞ր տըկի ըլի։ շարունակեց։

—Թա՛ղագիւլ, էնը խօքուտ մեռնեմ, աղէկ՝ վատ, էլը քեռ Նազարն եմ, մէ ճա՛ր։

Թաղագիւլը մնաւ խորթանոցը, որտեղ պա-

հել էր սանահեր Կիրակոսի բերած երեք բղուղ գինին, մի մեծ քերեղան լքցրեց և առաջարկեց Նազարին ասելով։

—Ա՛յեար, մարթու պէս խմես, ըմեն օր քեզի կինի կըտամ, որ մէյն էլ էտենց ես արի, էտէնց ես էկի, պակի տուռն էլ չե՛մ պըացի։ մկայ տիու դինաս։

Թաղագիւլն ինչ ուզում էր թող ասէր։ Նազարը քերեղանը մի շնչի մաքրեց։

— Օխա՛յ, օղորմի բաբայիտ, դայեայիդ կշտի մեուելքերին, որ մէյն էլ տաս՝ էս խեռ օղորմին դո՛ւզ կէթայ քեռ խօր, մոր կլխի վրան կը պըպըզի։

Շամամը իբրև վերջին բաժակ, ծիծաղելով մէկն էլ տուեց։

Նազարի քէֆը տեղն եկաւ, խելքն էլ գլուխը, ձայն տուեց։

— Թա՛ղագիւլ։

— Էն ի՞նչ ի։

—Ես իրկունը քէֆովցիր եմ, քընիր եմ, մտէս ինգիր ի, քեռ տունը շէն։ ըսկի չես ասելի, ախըր տիու երէկ տեղ կընացիր, ի՞նչ արիր, ի՞նչ թողիր, էն մառթու աշկըն էլ քեռ ճամբախն ի, մէ ջուղաբ տար խասու, ինչ որ Շահբազն ասիր ի։ Ասաց ու խսկոյն տեղից կանգնեց, դնաց ուղիղ Խանգեալդու տունը, դուռը ծեծեց։

Խանգեալդին։ — Էն վա՞ւ ի։

— Ես եմ սանահէր։

— Տնաշէն, ես էլ շիվար մնացիմ, էս վախտ վա՞ւ տըկի մեր տուռը թըփի, եա՛ր ըշկանք։

Նազար. — պըարի լոս.

— Աստու խէրը պըարին.

— Ըսկի չե՛ս ասելի, երէկ տիու խաբարի կը-նացիր, մեր աշկն էլ քիս ճամբանը մնաց, ըսկի մէ ջուղար չը պերիր, ասաց Նազարը։

Խանդեալդին. — Է՛ն որ տըկի ես ասեմ, կո տիու ես ասելի, զարար չունի, դը ասա ըշկանք, ախըր ա ի՞նչ ըլաւ։

— Ի՞նչ ըլաւ, տիու չե՛նալի որ չոր քարի վրայ էթամ Աստով՝ ըռհան, մարդայ կը կանանչի դէմս. Շահբազը իմ խոսկէն գինա՞ տիուս իկեալ, սամնեմ (բոլորովին) ըռադ արիմ. մառթն էլ խոսկ տըվեց էսօրվան խմա, որ իրկունը քիս մառթներ ա վերցես էթաս զուռցալու. ամա խինդ լըաբը միս, վեց լըաբը էլ կինի կօրօխկես, որ վախտով թա-դարուք տըսնան. կո՛ էտէնց. ինչ անելու ես՝ վախ-տով արա։

Խանդեալդին. — Շա՛մամ.

— Ասա՛.

— Մէ բօթուլ արաղ, մէ քիչ էլ զակուսկի պէ։

— Իմ աշկի՛ս վրան։

— Վէրց, քաւոր Ջան, վերց մէյ մէյ թաս արաղ խմենք ընչիւկ լոսը պըացվի, ըշկանք Աստված ի՞նչ ճճողութեն կըտայ, քիս կուշտ ա, ասաց ու շը-պըրտեց. — էտ տիու, էտ էլ արաղ ա, կինին, զա-կուսկան, քեանի քէֆըտ կուգի՝ խմի, Աստված սիրաս չամչընաս։ Ես էթաս եմ ըշկամ աղէկ միա մորթաճ ի, առնեմ թէ չէ՝ մեր ոչխարքերէն մէ-կեայ կը մորթենք. ասաց ու գնաց։

Քաւոր Նազարը շարունակից պատմել իւր սա-նամէր Շամամին, թէ ինչեր է խօսացել Շահբա-զենց տան մէջ և թէ ի՞նչպէս է յաջողցրել ի հար-կէ մի խօսքը՝ տասը շինելով, կոնծում էր ու եռան-գով պատմում. յանկարծ Խանդեալդին ներս մտաւ։

— Մառթու պըան տըկի Աստված ճճողի, զօ-ռելով զատ չի ըլի. աղէկ վախտ խասամ, տաս լը-դըը դլաւ (իւղալի) միս եմ պերի, մէքիչ վերց մեզի խմա Շամամ, զալանը (մնացածը) օրօխկի խը-նամենց ա, օխտը լըդըը էլ աղէկ կինի. մեր խնա-մին խաղարէն մէ մառթ ի, ափսոս ի։

Քաւոր Նազարը հազիւ տեղից կանգնեց ու ասաց։

— Ես գինամ իրկունը շատ երկէն կը նստենք, շատ կը խմենք, տարմէն աւել խմելը՝ հարամ ի. բազի մառթ կայ, էլ հօ խմելով, անշախ զրոց քեր անելով չի կշտանայ. էթամ մղայի դամ աշկս կը-պուցեմ, մնաք պըարին։

Ժ.

Քեասրմ բիչըմ կամ բաալը.

Երեկոյեան ժամը գուրս եկաւ թէ չէ՝ Խան-դեալդին իրենց դրացիներին, բարեկամներին ու գիւղի նշանաւոր մարդկանց տուն հրաւիրեց. իսկ քահանան ու քաւոր Նազարը արդէն Շահբազենց տանն էին, իրենք էս ճանապարհ ընկան. Շահ-բազն էլ իրեն բարեկամներից մի քանիսին հրաւի-րել էր. տուն մտան թէ չէ՝ ամենքն էլ ասացին.

— Օրշհնեայ ի տէր.

— Աստուա՛ծ օրհնի.

— Պըարով ծեզի, պըարով զըմնիա.

— Ա՛յ տիուք խաղա՛ր պըարով էկաք, ձայն տուին նստողները, համեցէ՛ք, վեր եարէք, փառք Աստու, տեղէն շատ ի՞նչ կայ, Շահբազի ի՞նչն ի պակաս. Աստած սիրացող ա՝ իկեայ նըստի։

Ամենքն էլ նստեցին, բայց Խանգեալդին հիւրերին պատուելու և տեղ ցոյց տալու համար, դեռ ոտքի կանգնած էր, Շահբազը նկատելով ասաց.

— Վա՛յ, իմ ջանը տիուս իկեայ քեզի խմայ, խնամի՝ Խանգեալդի, տըանք զըմեն էկող, էթացող են, ես ինան տիու տըկի մնանք. համեցէ՛ք, եա՛ր տէրտէրի, քաւորի կուշը նիստ։

Ամենքն էլ կարգով նստեցին, քաւոր Նազարը շարունակեց.

— Ախպէ՛ր Շահբազ, մի՛ ուշացու, ինչ անելու ես՝ վախտով արա. մենակ ես ինան տիու չենք, իշղըդա որ ուզենք՝ նստենք, զուռցանք. մկայ էն վախտը չի, շոտ իրար կպէք, խաց քըցէք, կինի պերէք, կերակուր, ինչ որ կայ։ Տէրտէր Ջան, տիու էլ խացը օրհնի, ըմեն պըան ուր զայդայով կէթայ։

Քահանան հացը օրհնեց, ժողովրդին հրաւիրեց ճաշելու, բաժակ վերցնելով ասաց.

—Սիրելի ժողովուրդ, դուք բոլորդ լաւ գիտէք, որ քաւոր Նազարը հէնց էն գլխից էս բարի գործին մասնակից, պատճառ է եղել, շատ-շատ նեղութիւններ է կրել. թէ Խանգեալդու և թէ Շահբազի բնութիւնից լաւ տեղեկութիւն ունի. այս

բաժակը կըվայելենք, որ այսօրուայ մեր կառավարիչ-թամադէն՝ քաւոր Նազարը լինի, բարով կառավարի, նորա թանկագին կենացը։

Բոլորն էլ ուրախութեամբ հեռուեցին քահանային ասելով.

— Քաւո՛ր աղա, պըարով կառավարես։

Թէև քաւոր Նազարը իրրև սովորութիւն, քիչ չեմ ու չու արեց այդ պաշտօնից հեռանալու համար, բայց շորերն էլ ուրախ էին. վեր առաւ բաժակն ու ասաց.

—Զունքի պըանը էկաւ, էտ տեղը խասաւ, զըմնով էլ սաղ ըլէք ուրախ, էտ մէ թաս ա կը խմենք էրկու խնամիների՝ Խանգեալդու ինան Շահբազի կենաց ա, որ դանց սաբաբովն ենք ժողնըվի տաղ, Աստած սիրով պըարեկամ պախի ընչիուկ վերչ ա։

Բոլորն էլ կրկնեցին Նազարի խօսքերը։ Նազարը մի մի բաժակ առաջարկեց Խանգեալդուն ու Շահբազին, թէ մէկմէկու կենաց խմեն և թէ շնորհակալութիւն յայտնեն հանդիսականաց։

Խանգեալդին. — Իշխոյ քաւոր աղաս պըարեմայհթեց, ես էլ կը խմեմ իմ խնամի Շահբազի կենաց ա. Աստած դար որթուն էլ զսմաթ անի էտ ուրախութեն ա, իմ թըխէն էլ շատ շնորակալ եմ նստող դուժումէն, որ իմ կենացը խմանամա՝ խնամի՛ Շահբազ, ընձի շատ զօռ չանես։

Շահբազը ծիծաղելով.

—Քեռ՛ տունը շէն, ինչ տըկի զօռ անեմ շատ, շատ՝ իրեք խայիր մանէթ փող տըկի ուզեմ, դարմով վախենա՞ս ես. սաղ ըլէք, խնամուս կենացն էլ թող ըլի։

Զանազան կենացներ խմելուց յետոյ՝ Նազարը նորից շարունակեց.

— Էտ մէ թասն էլ կը խմենք նըստող դուժումի, տըրկեց պըարեկամքերի կենաց ա. որ օսօրվան օր ա, ջաֆայ են քեաշի, քեօռլուղ են կերի, էկիր են էտ ուրախութենին գըտնըվիր են, Աստած ուրենց տըղներին, թոռներին էլ ղըսմաթ անի։

Քաւոր Նազարը էլ կենացներ չըթողեց պակաս, տեսաւ որ բոլորն էլ ուրախ տրամադրութեան մէջ են ու զանազան առարկաներով պարապած՝ ասաց.

— Շահբա՛զ ախպէր, խացը շէն արա. տէրտէր Ջան սըֆրան օրհնի, քշերի էթալի, մեղի հալաասել զուռցալու շատ պըան ունենք։

Քահանան սեղանը օրհնեց, հացը վեր առան, բոլորն էլ մէկ մէկուց մանաւանդ երկու խնամիներից շնորհակալութիւն յայտնելով։

Քաւոր Նազարը այս անգամ էլ բաժակը ձեռքըն առաւ.

— Պրարեկամքե՛ր, տըրկեց ախպէրքեր, մենք զըմընով էլ ախպէր ենք. օսօր Խանդեալդուն, Շահբազին ի, կանոխ էլ՝ իմը ինան քեօնն ի, խընթրես եմ զըմնով էլ լսէք։

— Սանախէր Խանդեալդի, տիու էլ, ախպէր Շահբազն էլ՝ մօտ եարէք. էտ պըան ա՝ Եւայ, Ադամն մնացիր ի մեր պապկընեբին, դանցմէն՝ մեր խոր ա, խորէն՝ մեզի. ճաները (վէգ) կը ժողվեն խաղալու խմայ. հալբաթ մեզ էլ մէ պըան կա՞, որ ժողնըվիր ենք ատղ. էտ պըանը ըմնով էլ դինաք,

լսիր էք, իմացիր էք, որ Խանդեալդին Շահբազի ախչին ուզիր ի, նշան ի տրի, կօ էկաւ տարին թըմըմաւ, մեր պապկընեբի զայդա, զանուրով, Քեասըմ, Բիչըմ, Բաշլըղ տալ առնել կայ, զըմեն տըկի վերճանայ, որ ըմեն մառթ ուր պըանը ճաշնայ. ամօթ պըան չի, մենք շըհարցի (քաղաքացի) չենք, որ ախչըկայ խետը պըաժինք, ես փոդ տընենք. դառնալով հանդիսականներին.

— Ա՛յ մառթներ, պըարեկամքեր, ազորթը ասէք, էտէնցի՞ եոխսա չէ։

Բոլորը միասին. — Էտէնցի, կեցէ՛ք մեր քաւոր աղան։

Նազարը շարունակեց.

— Ախպէ՛ր Շահբազ, էտ մեր տէրտէր ա, տրանք էլ մեր պըարեկամքեր, մեր աշկի լոն են. ասա՛ ըշկանք, ի՞նչ ես ուզելի, ես՝ խարսու խետը ի՞նչ տըկի օրօխկես, եօրղանէն, դոշակէն, դարեայէն. ասա՛ ըշկանք։

— Նազա՛ր ախպէր, ասաց Շահբազը, էտ մենակ ընձմով չի, իշխոյ կասեն, ալամ աշխըրքեօվի. ես իմ խնամուն զօռ չեմ անի. առնելու տիմանց զատ չեմ խոստանայ, մէ ճակատ բաջախլուլէն սավայի, որ ասես՝ մէ մատի փաթոթ էլ խետը չե՛մ տընի, մնաց իմ մառթկութենին. ամա աղկի իմացէք, որ խայիր իսուն մանէթ փոդը կառնեմ, մկայ զինքեայ գինա։

Ժողովուրդը խառնուեց, աղմուկը բարձրացաւ, ամեն մարդ իւր դատողութիւնն էր առաջ տանում. Խանդեալդին լսողութիւն խնդրելով ասաց.

— Խնամի Շահբազ, ըմեն պըան զայդայով կըլի, իշխոյ ասիր՝ էլը ես ինան տիու մեյմէկիու պէտք կիկեանք. էտ մառթներն էլ՝ ուրենց գեօրայ տուն, տեղ, պըան ունեն, հօ ընչիուկ լոս տաղ չե՞ն նըստի, որ ես ասեմ՝ տիու ասես: Ես քեզ ախչիկայ մորթելու չեմ տանելի, ծախ չեմ առնելի, իմ տղան էլ խետ ա, քեզի տըկի տամ: Ընչիուկ մկայ մէյն էր, տարմէն ետ՝ էրկուսը կըլի, թէ ընձի խըմայ, թէ քեզի խմայ. պըռծտծը, քեզի ութ թուման փող կը տամ: Ալլահ վաքիլ, թող էտ մառթներն էլ ասեն:

Հիւրերը չորս կողմից ձայն բարձրացրին և համաձայնութեամբ կանչեցին երկու խնամիներին էս՝ մի մի բաժակ գինի առաջարկելով, որպէս զի կարողանան այդ հարցին վերջ տալ և ասացին.

— Մենք ըմբնով մասլըհաթ արինք, որ Ալլահ վաքիլ պըան ա՝ աղէկ կըլի, որ մեզի չըլսէք զըմբնով էլ կըլենք կէթանք. նա՛ քեզ ասած ա՝ նա դար. խայիր մանէթ դուզ արինք, Շահբազն էլ ուր մառթութեն ա, ինչ կառնի, չի առնի՝ զիյհն ի խաբար:

Թէ Խանգեալդին և թէ Շահբազը ցոյց էին տալիս իրը համաձայն չեն, բայց հիւրերի սիրելով, քարոզ ու ճառեր կարդալով՝ վերջ տուին նորանց խօսակցութեան, բաժակները մէկմէկու խփել տալով՝ կեցցէներ կանչեցին:

Շահբազ. — Էտ էլ թող ծեր ասածը ըլի, մառթու լսելն էլ աղէկ կըլի. տիուք էտ էլ ասէք, խառնիսի խմա՝ միս, կինի, արաղ, պրինձ ի՞նչ տըկի տայ, էն էլ ռադ արէք, թող մէ խետ խոտը կըտրուվի:

Խանգեալդին ծիծաղելով.

— Խնամի Շահբազ, ընձի աղէկ ճանչըցի, ես Խանգեալդին եմ, փառք Աստու, ի՞նչս ի պակաս, խինգ խայիր մանէթ էլ որ ուզես՝ կըտամ, ես իմ ասածը կանեմ: Էնղըդայի որ՝ մենք պըարեկամ մառթ ենք, ընձի քարի մի՛ զարկ, իշխոյ կասեն, պըարեկամացանք՝ բարաբար ըլանք:

Այդ միջոցին քաւոր Նազարը բացակայ էր. նա պարտաւորուած իբրև կառավարիչ՝ զգոյշ պիտի մնար, բայց տեսնելով որ այդ գործը հեշտ ու հանգիստ վերջանալու չէ, ժամեր կըտևի, մի կերպով իրեն քցեց Շահբազենց շիրտխանէն՝ Շահբազի կին Սանամին ասելով.

— Խա՛րս, Խանգեալդուն նեղ տեղն ենք քըցի, ընձի մէ քեռասայ կինի խասու, որ էթամ դանց դավին ռադ անեմ: Ճիշդ այդ միջոցին էլ տուն մտաւ, զարմացաւ հիւրերի և երկու խնամիների գոռոցը լսելով, բաժակ վեր առաւ ու ասաց.

— Շատ պըան իմ ասածն ի ըլի. էս խետ էլ իմ ասածը տըկի ըլի. ըսկի մէկիս էլ իրաւունք չունէք զուռցալու: — Սանախէր Խանգեալդի, ախպէր Շահբազ, իմ վիճիր ա էտենց ի. մառթներ, տիուք էլ աղէկ անկեաճ արէք, տատոդութեն տըվէք — տասնըխինգ լըդըր միս, մէ կարաս կինի, օխտը լըդըր պրինձ. էրկու լըդըր եղ, մէ լըդըր էլ արաղ. տէրտէր Ջան, թասը վերց էրկու խնամիներին էլ օրհնի. պրա-

բեկամքեր, տիուք էլ խմէք ասէք, Ասվածծ շընախաւոր անի ամէն։

Ամենքն էլ հետևեցին քաւոր Նազարին երկու խնամիների կենացը խմելով։

— Տարմէն էլ պրա՛ծանք, ասաց քաւոր Նազարը. մէյմէկ էլ խմենք—ամա քեռասյով—ասենք. Ասվածծ էթացողին պըարի ճամբախ տայ, մնացողքերին էլ քաղցրը քիուն. մնաք բարին ասելով բոլորն էլ գուբս դնացին։

ԺԱ.

Հարսանեաց հանդեռձներ.

Երկու երեք օր չանցած՝ Խանգեալդին նորից կանչել տուեց քաւոր Նազարին և ասաց.

— Քաւոր Նազար, ըմեն պրան քեռ ծեռովը ի ըլի, շատ ազնկիութենն ես արիր՝ կարմունջն էլ ընցու։

— Ի՞շխոյ. ասաց Նազարը։

— Բա, հալա շատ քեռլուզ կը տանք քեզի, կանոխ (վաղը) իմ խաթըր խըմայ, տըկի իկեաս էթանք Երևան (Երևան), թէ Կիրակոսի խըմայ, թէ խարսի խըմայ, թէ տան պակաս պռատը գրբստելու խըմայ ճոթ կտոր առնենք. առանց քեզի՝ ես տեղ չեմ էթայ, կուզի որ վիրս էլ կռեն։

Քաւոր Նազարը թէև մի քանի պատճառներ առաջարկեց իրը թէ չի կարող գնալ, բայց ինքն իրեն մտածելով ասաց.

— Ա՛յ Չանըմ ընձնէ՞ ինչ ի էթալի, խաց կու-

տեմ, կինիս կըլսեմ, ճամբխի քեռբայ չեմ տայ, Խանգեալդու Չանը սաղ ըլի։— Աղորթի, մեր էլ պրանի փիս վախտն ի, ամա ի՞նչ անեմ, տըկի իկեամ, իլլաչը ինչ ասայ։

Խանգեալդին. — Շամամ, մեղի խմայ խաց, կինի պէ, տիու էլ եար նիստ տաղ, պրան ունեմ ասելու։

Շամամը ամեն ինչ պատրաստելուց յետոյ, ինքն էլ մի անկիւնում նստեց.

— Ա՛յ մառթ, դը ասա ըշկանք, ի՞նչ տըկի ասես։

— Ասեմ, մենք տըկի Երևան էթըանք խատնիսի խմա ճոթ կտոր առնելու, ասա ըշկանք մեղի ի՞նչ ի պէտք. ատա թող քաւորն էլ կիրի, որ մըտերքերէս չէթայ։

— Տնաշէնի մառթ, աշխարքի մէջ ա դանուր դայդա կայ, խնամի Շահրաղն էլ ծեղի խես տըկի ըլի. բալքի տիու տատ՝ էն ըռազի չըլաս, չըխաւնաս, էտէնց պրա՞ն կըլի, ասաց Շամամը։

— Մենք Շահրաղի խեսը դուռցայիր ենք, ասիր ի որ՝ քեռ խարսու խմայ ես առնելի, մեղի դարուլ ի, խամ խաս, ինչ կառնես՝ տիու գինաս։

— Բա, որ էտէնցի, շէն մնայ մեր խնամին, շատ ազեկ մառթ ի։

Նազարն ու Խանգեալդին շարունակեցին հաց ուտել, գինի խմել, միևնոյն ժամանակ՝ գրել Շամամի ասածներն էլ։

— Կառնես տատը գեաղ կանանչ դանավուզ՝ խարսին դարեացու, օխտը գեաղ կարմիր սէթընտեմ կինիս կըլսեմ, ճամբխի քեռբայ չեմ տայ, Խանգեալդու Չանը սաղ ըլի։— Աղորթի, մեր էլ պրանի փիս վախտն ի, ամա ի՞նչ անեմ, տըկի իկեամ, իլլաչը ինչ ասայ։

Խանգեալդին. — Շամամ, մեղի խմայ խաց, կինի պէ, տիու էլ եար նիստ տաղ, պրան ունեմ ասելու։

Շամամը ամեն ինչ պատրաստելուց յետոյ, ինքն էլ մի անկիւնում նստեց.

— Ա՛յ մառթ, դը ասա ըշկանք, ի՞նչ տըկի ասես։

— Ասեմ, մենք տըկի Երևան էթըանք խատնիսի խմա ճոթ կտոր առնելու, ասա ըշկանք մեղի ի՞նչ ի պէտք. ատա թող քաւորն էլ կիրի, որ մըտերքերէս չէթայ։

— Տնաշէնի մառթ, աշխարքի մէջ ա դանուր դայդա կայ, խնամի Շահրաղն էլ ծեղի խես տըկի ըլի. բալքի տիու տատ՝ էն ըռազի չըլաս, չըխաւնաս, էտէնց պրա՞ն կըլի, ասաց Շամամը։

— Մենք Շահրաղի խեսը դուռցայիր ենք, ասիր ի որ՝ քեռ խարսու խմայ ես առնելի, մեղի դարուլ ի, խամ խաս, ինչ կառնես՝ տիու գինաս։

— Բա, որ էտէնցի, շէն մնայ մեր խնամին, շատ ազեկ մառթ ի։

Նազարն ու Խանգեալդին շարունակեցին հաց ուտել, գինի խմել, միևնոյն ժամանակ՝ գրել Շամամի ասածներն էլ։

— Կառնես տատը գեաղ կանանչ դանավուզ՝ խարսին դարեացու, օխտը գեաղ կարմիր սէթընտեմ

դուր՝ քեաթիբացու, զաղարան էլ խնտա. մէ ոսկէ դալամ բասպինտ, մէ ջուխտ սաղրի սօլ ևլնևլն։ Տան խմայ, Կիրակոսի խմայ էլ տիուք գինաք, ինչ կառնէք՝ առէք։

Հետևեալ առաւօտ գիշերով՝ մի քանի բուռկայ արաղ կուլ տուին ու ճանապարհ ընկան՝ զանազան առարկաներ խօսելով վերջապէս տեղ հասան և ինչ որ հարկաւոր էր առան վերջացրին։

Խանգեալդին.— քաւո՛ր Նազար, ընձի խմայ էլ տըկի մէ քեանի կտոր խայհնելու պրան ման առնեմ — չուխայէն, քըդակէն, սօլէն զատէն, եար էթըանք հալա մէ թանգ էժան ա իմանանք։

— Էթըանք սանախէր, ամա ինչ որ քեզի խմա առնես, ի՛նչ կտոր ինչ ըռանգ, զարմն էլ ես տկի առնեմ ընձի խմայ. թող երկըսիս շորերն էլ մէ ջուռայ ըլի։

— Բաս որ էտենց ի, առնենք երկու չուխայ, երկու ըուխարայ քըդակ, երկու արխալըղ, երկու ջուխտ էլ սօլ։

Այդպէս էլ արին, ճիշդ միատեսակ հագնելիք առան ու վերադարձան ուղիղ Խանգեալդու տունը, բարև ասացին ու նստեցին։

Նազար. — սանամէր, էս խետ որ՝ հալալ ի, արժանի ի աշկըլոսանք խմելը, համ աղէկ պեռով, բարխանայով ենք էկի, համ էլ շատ ցուրա, քեռլուղ ենք քեաշի։

— Աղորթ ի ասելի, Շամամ, ել որ էլ մեզի հալ չի մնացի խաց պէ, կինի պէ, ասաց Խանգեալդին։

Շամամը, որ երկուսի բնութիւնն էլ լաւ գիտէր որ երկար չէին կարող համբերել՝ ամենից առաջ գինին հասցրեց։

Խանգեալդին առանց համբերելու.

—Շամամ կերակուրէն, զատէն ի՞նչ ունես։

— Աստուն փառք, ի՛նչ որ ուզէք կայ, ծեր զօռ զօռ ա՝ կինին էր, օնդոքին շատ պերիմ, էնէնց մէ թոնդրան շօրվայ եմ էփի պտուկով, որ մատերքերըտ էլ խետը կուտէք։

—Բէփերքերս քեօք ըլաւ սանախէր, էս խետ քեասան լինքեայ լից, ոտով էլ մէ դայիմ ճըխմըխտի. օղորմածիկ բաբաս կասէր, —մառթու խայիր թուման պարտքը ըլի, իրկունը թող շօրվան թոնդիրն ըլի, ասաց Նազարը։

Երկուսն էլ իշտահով շարունակեցին ուտել խմել. իսկ Շամամը սկսեց կապոցները մէկ մէկ բանալ և ուշադրութեամբ նկատել առած կտորներն։

—Ի՞շխոյ ի, սանամէր, խաւնե՞ս ես մեր արած բազարլըղին՝ եոխսը չէ։

— Ընչի՛ չէ, ասաց Շամամը. պրարով տիու էլ խառնիս անես, փստիկ քաւորքերին փսակես։

Քաւոր Նազարը իրեն պատկանեալ բաներն վեր առաւ, շնորհակալութիւն յայտնեց, մի քերեզան գինի էլ նորից խմեց ու բարի գիշեր ասաց։

ԺԲ.

Շոր-ձեւէք.

Առաւօտը դեռ լոյսը չէր բացուել՝ Խանդեալդին ձայն տուեց.

Շամամ, Շամամ.

— Էն ի՞նչ ի.

— Ես իմ պարտքէն պրոծամ, ուզածըտ առիմ պերիմ ել, վիրը կանչելու ես՝ կանչի, որ խարսի շորերը ձեւէք, կարէք, իշխոյ որ զայդան ի, տիու գինաս. էտ էլ հօ իմ պարտքը չի։

— Հայը չես պռծի, ասայ Շամամը, քել մըզայի չամիչ, փշատ, ֆընդըզ, պօպօք, նօխուդ առ, որ իրկունը էլով, գիւնով (ապղականներով) էթանք խնամոնց տուն ա, որ շոր-ձեւէք անենք, խարսի բոյովը տըկի ըլի, համ էլ ադաթ ի, հօ շուտարայ չի։

— Բաս որ էտէնց ի, ել մէ քեռասայ կինի պէ մղայի էլ մհանայ շըհանայ, խմեմ ըլեմ, շատ եմ մռսել ի. հալա տիու իմ կլօխ ա շատ օյինքեր կըխանես, եարաբ էտ դալմըդալէն ե՞փ տըկի պրոծենք. ես գինամ էր որ խարնիս անելը շատ մէ հասանդ պլան ի, տիու մի՛ ասա, էքեայ դըռընթու ի, հալայ ի՞ւր ի. ասայ ու գնաց Շամամի ասածներն անթելի բերեց ու ասայ.

— Առ, այ կընիկ, կօ տըանք էլ պերիմ, եարաբ պրոծամ, ելօխսը հալա չէ։

— Նանի թէ պրոծար հալալիգեայ (առ այժմ), Ասված քեզի խեատ, իւր կէթաս քել. տարմէն էսթեկ բիրաղի օղլուշաղի պըան ի, էլ քեզի գեօրայ գատ չըկայ։

Խանդեալդին դուրս գնաց թէ չէ՝ Շամամը ձայն տուեց Կիրակոսին.

— Եար բալամ, ընչիուկ մըկայ չես էր աւատալի, որ բաբատ տըկի քեզի փսակի, կօ էկաւ խասաւ շոր-ձեւէքեայ. ել կանչի կակոյիտ (հօրեղբօր) կընկան, Եղսոյին, Արմազանին, Սանամին, Մառթային, Խաթունին, Մանուշակին, Ըռհանին, Գիւլնազին, Ոսկինարին, Գիւլգեազին. կասես, որ նանաս ասելի, ծեր խարս ախչիկքերը ժողվէք եարէք մեր տուն ա, որ էթըանք խնամոնց թեխ ա շոր-ձեւէք. ըմենէն առաչ կէթաս քաւորէնց տուն ա, քաւորի կընկան, Թաղագիւլին կասես, որ՝ սիրտը վիր խարս ախչան կուզի, թող վերցի իկեայ։ Կրօղի մէջն էթայ մեր քաւոր Նազար ա, դարն էլ կասես, որ էթայ խնամոնց տունը, ասի որ իրկունը տըկի իկեանք շոր ձեւելու, տիուք էլ ծեր պըարեկամքերին, տըրկեցքերին կանչէք ժողնըվեն իկեան։

Կիրակոսի ջանին մունաթ էդպէս յանձնարարութիւններ կատարելը, էն բոպէին մոր հրամանը կատարեց. գիւղի նորապսակ հարս ու աղջիկներին իրենց տունը բերելուց յետոյ, թէ հարսի զգեստները և թէ մրգեղէնները մի մեծ սինու մէջ դասաւորած՝ խմբով գնացին խնամի Շահբազենց տունը, ուր երկու կողմի հիւրերն մէկմէկու բարևելուց յետոյ՝ նստեցին։

Շամամ. — Պրարով տըանք, խնամի՛ Սանամ,

հալա աշկըտ լոս ըլի, էս իրկուն քեզի զօնաղ ենք էկի, ռազի ես, թէ չէ։

— Ընչի՞ ըռազի չեմ, պըարով ես էկի. փառք իմ Աստուն, ախչիկ եմ տըվի, տղայ եմ առի. մեր տուն տեղ ա՝ ծեզի փեշքեաշ ի, համեցէք նստէք։

Քաւորի կին Թազագիւլը՝ կառավարչական մասնից պակաս չէր իւր մարդ Նազարից. շարունակեց.

— Խնամի՛ Սանամ, սանամէր Շամամ, տըրկեցքեր, պըարեկամքեր, խարսներ, ախչիկքեր, ըմընով էլ լսէք, տաղ էլ պախելու պըան չըկայ. մենք էկիր ենք մեր խարսնացու Նիգեարի խմա շոր-ծեւէք. խարսնացուն էլ կանչէք թող իկեայ տաղ։

Սանամը ձայն տուեց իւր աղջիկ Նիգեարին և նորան շրջապատող հարս աղջիկներին՝ հրաւիրելով դէպի նստող կանանց խումբը։

Նիգեարը մեղմ ձայնով. — Ամա՛ն չեմ իկեայ, ախար ամօթ ի։

— Ի՞նչ ամօթ, բալա, էտ աշխըրքեօվ ի, խօ մենակ քեզ կլխովը չի՞. չորս կողմից ձայն տուին և առաջ տարան. ի հարկէ առաջուց պատուիրել էին որ նախ գլուխ խոնարհեցնէր իւր սկեսուրին — Շամամին, քաւորի կնոջը և ապա բոլոր հանդիսականաց. Նիգեարը այդպէս էլ արեց և մի անկիւնում կանգնեց։

Թազագիւլը տեղից կանգնելով՝ Նիգեարին բերեց զգեստների ծրարի մօտ կանգնեցրեց. բաց արեց կապոցը, ջոկ ջոկ ցոյց տալով, թէ իւրաքանչիւրը ինչի տեղ է ծառայելու. և այդ ձևով կըտրելու իրաւունքը արդէն քաւորի կնոջն էր. նախ՝

հանեց դէյրացուն. խաչաձև չափեց Աստվա՛ծ շընախաւոր անի. մկրատը ձեռքն առնելով ասաց.

— Սանամէր Շամամ, մկրատըչի՛ կռելի, խալաթ ի ուզելի պէ՛ ըշկանք, ի՞նչ ես տալի, ծիծաղելով ասաց։

— Քեզ խալաթը իմ աշկին, իմ կլխին, մի՛ վախեցի, հէնց ինչ որ ուզես՝ հաղրը ի. մէ քեաշի՛ ջռոցը խան, պատասխանեց Շամամը։

Թազագիւլ. — Աստվա՛ծ շնախաւոր անի, մէ պառցի խալաւորեն, տղայ, ախչկայ խէր ըլէն. ասաց ու կարեց, էնպէս էլ քեաթիբացուն։

Բոլորը միասին, Աստվաձ շնախաւո՛ր անի. Թազագիւլ — քեզի քաւորի կնիկ՝ Նազարին էլ քաւոր անի. սաղութենով ուրախութենով խայհնես, բալամ Նիգեար. զօրանաս։

Թազագիւլը բոլորին էլ մի առ մի ցոյց տուեց ամեն մի կտորներն էլ. մրգեղէններ բաժանեց իւրաքանչիւրին հաւասար բաժին հանելով. բաժակն առաւ ու ասաց.

— Հէնց տըկի տղամա՞ռթ ըլի, որ աշկըլոսանք ասի, մայ կնիկեայ մեղաւո՞ր ի։ Սանամէր, խնամի, դադոներ (քոյրեր), խարսներ, ախչիկքեր, ըմենիտ աշկն էլ լոս ըլի՝ մերն էլ ծեզի խետ. Աստվաձ Կիրակոսին էլ արժանի անի թագ փսակին. վարիտ էլ որ տղայ, ախչիկ ունէք, Տէրը զինքեայ արժանի անի էտ ուրախութենին. ասաց ու խմեց։

Բոլորին էլ առաջարկեց խմել նոյն կենացը. այդ էլ ի հարկէ նորանց կամքին կըմնար, խմել՝ թէ ոչ. իսկ բարեմաղթելն՝ բոլորի էլ պարտականու-

թիւնն էր. ամենքն էլ ուրախ, ուրախ բարեմաղթեցին ու ոտքի կանգնեցին. Նիգեարն էլ բոլորին գլուխ խոնարհեցրեց. այնուհետև կարդաւ բարի գիշեր ասելով՝ բաժանուեցին։

ԺԳ.

Խորհուրդ.

Երկու օր անցած չանցած՝ արդէն հարսանեաց հանդերձներն կարած պատրաստ էին. Շամամը յարմար միջոց գտնելով՝ ասաց Խանգեալդուն.

—Ա՛յ մառթ, ծեւէ, կարէ պըռծանք, մի՛ ուշացու. ինչ թաղարուք ունես տրսնալու՝ տես. մեզի սաբաբ չըբռնես, ասես տիուք եռացուցիք։

Խանգեալդին. — Կիրակոս, ել շոտով քաւոր Նազարին էլ կանչի, խնամի Շահբազին էլ. ծեռաց խասի Սամազար, Պետոյի Կոստանին ասա, էտ սըհաթ ա, բաբաս քեզի կանչելի. էն էս տարի լաճուն փսակեց, խարնիս արեց, ըմեն պըռանի դանուր զայդան դինայ. շատ մէ դիլավար, կեօրծ խոքացող մառթ ի, քաւոր Նազարէն աւատա, աւել ըլի՝ պակաս չըլի. Շամամ, տիու էլ մէ թքեայ խաց, մաց շինի, իկեան մէ մասլըհաթ անենք խոտը կըռենք։

Նոր էր սկսել երեկոյեան մութը վրայ հասնել, քաւոր Նազարն ու խնամի Շահբազը տուն մտնելով բարև տուին ու նստեցին։

Խանգեալդին բարևելուց յետոյ, — Կիրակոս, մէ քիչ կինի պէ տաղ, մէյ մէյ թաս խմենք զուռ-

ցանք, ընչիւկ մեր ախպէր Կոստանն էլ իկեայ. տիուք էլ ադէկ գինաք, որ ըսկի մէ մառթ՝ դար լեզուն, դար խոսք զրօցքեր ա չի բաշարի զուռցալ, առխային եմ, որ քաւոր Նազարը ինան Կոստանը՝ մեր հարկը եօլա կըտանեն, եոխսա ճոյ մառթու պըռան չի։

Խանգեալդին դես խոսքը չէր վերջացրել, բաժակը ձեռքին՝ լսեց.

—Բարև ձեր, քոմշըքին, ասաց Կոստանը. (Կոստանը դրացի Սամազար գիւղից լինելով, տարբեր լեզուով է խոսում. նա Երևանի նահանգում յայտնի է ամենքին իւր կատակներով ու սրախօսութեամբ)։

Խանգեալդին նկատելով այ, տիու խազար խազար պըռարով էկար, ախպօր տղայ, եար նիստ, ըշկանք, քէֆըտ, հալըտ ինշլոյ ես, առ մէ կինի խմի, կրօղի մտէն էթաս, առ ասա՝ Ասված շնախաւոր անի։

—Էդ իլա՛ւ, հա՛, հօրօղդէր, ասաց Կոստանը. գիդամ, նեղ տեղն ես ընգէ, սուրբ Սարգիս ես զանչըմ, նշանդրէքը մենակ մենակ կերաք, Կոստանը նոր մտներդ յընգաւ։

—Բեօ տունը շէն, քեանի՛ խետ տղներին ապըսպըրիր եմ, Կոստանին էլ կանչէք, հա էկան ասին կեղը չի, տունը չի, մէ մհալ ի մէ Կոստան, վա՛ւ ի գինալի իւր ի. ասաց Խանգեալդին.

—Ես գիդամ ոնց ես զանչէ, եաւաշ մէ մասալա ասեմ։

—Ասա՛, ասաց Խանգեալդին. զաթի տիու մա-

սալայով կը ղուռցաս, կ՚տար խմա եմ էր ասելի։

Կոստանը շարունակեց.

«Կըլնի՛, չիլնի, ժամանագով՝ ձեզ նման մէ քաւոր՝ մէ սանահեր կըլնի. մէկ օր քաւորենց տանը խաշ կեփեն. ուտելու վախտը՝ քաւորի կնիկը կասի. այ մառթ, ընչի՞ մեր սանահօրն էլ չը ղանչիր։ Մառթը դաստախոնի տուտը կը բանցրացնի, ձէն կըտայ. սանահէր, շուտ արի, խաշը ուտում ենք, քո ճամիէն ենք թամաշ անըմ։. ինձ էլ ըտէնց ես ղանչէ։ Քոմմըքով էլ սաղ ըլլնէք, Աստուած բարու հետ, ասաց ու բաժակը դատարկեց։

Քաւոր Նազարը մի փոքրիկ ուտելիք առաջարկեց Կոստանին ասելով.

—Բաշ մազա,
—Բաշն թազայ,
—Յոմար՝ անո՛ղ,
—Կեանքդ խոշ,
—Իշտըղն նուշ օլայ,
—Սավտիգին սանա թուշ օլայ,
—Իշտըղն բարդախտան,
—Սավդիգին չըխայ չարդախտան։

Քաւոր Նազարը տեսաւ որ իղուր է, չի կարող Կոստանի հետ շարունակել, բաժակը վերցնելով ասաց.

— Իրաւունքա՛ քեօննի, աղաւորթը ասեմ ես՝ քեզի խեռ չեմ բաշարի, տար տիմանց էլ քեզի կանչեց մեր սանախէր Խանգեալդին, մենք էլ մընանթ ենք անելի որ նեղուլթեն քեաշես, մեզի

պրանի կրլխու տնես, ընչիւկ խառնիսէն պռծնենք, քեօ խալաթն էլ՝ մեր աշքի վրան, իշխոյ կասեն, խազար պանող մէ կարքատիրող...։

—Նա՛ լաւ էք ասըմ, ամա՝ ես չեմ գիդըմ, բանը որդէ ա հասէ։

—Ըմեն պրանն էլ ըռադ ըլիր ի. ըմեն պրան էլ հաղըր ի. մնացիր ի խառնիս անելը. զուռնաչիներին, մհալի մառթներին տիու աղէկ կը ճաշնաս, վիրը կանչենք, եա ինչ թաւուր անենք, տիու տըկի կարքատիրես, պատասխանեց Նազարը։

ԺԴ.

Կառավարիչ Կոստանը.

—Բանը որ ըդէ ա հասէ, ես էլ ասեմ կառնես՝ մէ լիդր տանձ, մէ լիդր խնձոր, կէս լիդր շաքար. դու անըմով մառթ ես, դու ես մէ տղայ, էս սաղ մըհալը քեզ ճանանչըմեն, ամենին մէ խատ կը տաս, եա՛ տանձ, եա խնձոր, եա մէ կտոր շաքեար։

—Տանց պրանն էլ խէր ի, ասաց Խանգեալդին, տիու է՛տ ասա՛, մըհալէն վիրը կանչենք, Կոստան Ջան։

— Մհալից կըղանչես առաչ՝ Ղզըլթամրու իշխաններից,

Զիլինգեար Ներսէսին.
Բուդոյի Սեփանին.
Մուրադենց Օհանէսին.

Սարդարենց Ներսէսին.
Շագոյենց Թաթոյին.

Քէֆ անողներից՝

Նալբանդ Գրիգորին.
Մուրադենց Ազադին.
Գեօղալի Նիկողոսին.
Սաֆարի Վարթանին։

2. Ֆռանգանոց գեղից.

Իշխաններից՝

Ներսէս Մաթոսովին.
Մաթոս Թորոսովին.
Գրիգոր Անդրեասովին.

Քէֆ անողներից՝

Սաքօ Գափռէլովին.
Մկրտիչ Աւետասովին.
Եղոյ Փաշիկովին։

3. Հաջի-դարայ.

Իշխաններից՝

Մուխսի Միքայէլին.
Ղարիբի Մուրադխանին.
Սաֆարի Յակոբին.

Քէֆ անողներից՝

Ղարիբի Օհաննէսին.
Սէ Ակոյին.
Միրզայի Սհակին։

4. Դողս.

Իշխաններից՝

Լալայենց Աւագին.
Վերդու Առաքելին.
Դարբին Աթոյին.

Քէֆ անողներից՝

Մաքոյի Գօքօրին.
Պեռոյենց Արսէնին.
Քօչարենց Սհակին։

5. Մոլա-դուրուն.

Իշխաններից՝

Նունուսի Կարոյին.
Թօրոյենց Բարսեղին.

Քէֆ անողներից՝

Գալուստենց Պողոսին.
Մարդոյենց Հայրապետին.
Նիկողոսենց Մարկոսին։

6. Հաջիլար.

Իշխաններից՝

Սհակ Մկրտչովին.
Տանուտէր Ղազարին.

Քէֆ անողներից՝

Դալլաք Մարկոսին.
Բեղլու Բարոյին.

Քեանդոյի Ալէքսանին.
Խուդոյենց Յովակիմին։

7. Գրամփայ.

Իշխաններից՝

Քեարամի Սայեադին.
Սև Ղազարին։

Քէֆ անողներից՝

Մարգարենց Յակոբին.
Մուրադենց Թէոսին.
Քեարամի Գրիգորին։

8. Մուղանչուղ.

Իշխաններից՝

Նավո Կարապետովին.
Սարգիս Խուդոյեանին.
Դարբնի Խաչոյին.
Հաջի Թէոսին.
Տէրտէրի Ասոյին։

Քէֆ անողներից՝

Համ իշխան, համ քէֆ անող՝ Եաւաշի Օհանէսին, լաւ էլ քեամանի քաշել, խաղ ասել գիդայ.

Սարի Իւլդուզ Խաչոյին.
Կարապետի Համբոյին.
Դալլաք Աւետսին։

9. Վերին Այլանլու.

Իշխաններից՝

Մուսէսի Խաչոյին.
Օսկոյի Թաթոսին.

Քէֆ անողներից՝

Տէրտէրի Ենոքին
Բլէդ Գէորգին.
Գէորգ Դանդուռովին.
Մաղօ Զաքարովին.
Զեվզու Գէվոյին.

10. Աղաւնատուն.

Իշխաններից՝

Կոստանդ մուխսի Խանգեալդովին
Գրիգոր Թորոյեանցին.
Մելքիսէթ Բաղդասարեանցին.

Քէֆ անողներից՝

Խուդոյենց Սհակին.
Սրուդաշ Գէորգին.
Յարոյի Գրիգորին.

11. Աղջա - դալայ.

Իշխաններից՝

Սուլեայ Սմբատին.
Խաչոյի Օհանէսին.
Սաղոյենց Բաղդասարին.

Քէֆ անողներից՝

Կորոյի Վասլին.
Մալխասի Թաթոսին.
Նաւոյի Գալոյին։

12. Խզնաւուզ.

Թէ իշխան եւ թէ քէֆ անողներ.

Սուղեայ Նահապետին.
Թաղագիւլի Յակոբին.
Աղաեանց Սեփանին։

13. Սամաղար.

Իշխաններից՝

Սեփան Յարութիւնովին.
Աթօ Մկրտչովին.
Գլավայ Կիրակոս Սաֆարովին, որ էս սաղ մնալը ընդբայ պէտա մառէթ չըկայ։
Կարապետ Յարոյեանին.
Սհակ Մկրտչեանին.
Տանուտէր Յուսէփին.
Կարապետ Սհակովին։

Քէֆ անողներից՝

Սամուէլի Գէորգին (մականուանեալ Ղասաբ-բաշի, Փարմանի.
Պեռոյի Եալանչի Կոստանին, որ հէս ա ըսակ նստած ա։
Մանուկի Առաքելին.
Բաղոյի Աւետին.

Սանդրոյի Պապլին.
Քեռոսի Ղարիբին.
Վալադ Թաթոյին։

14. Հայ-բաղ.

Իշխաններից՝

† Ավչու Յակոբին.
Վաքիլ Սարգսին.
Տանուտէր Մաթոսին.
Մուրատ-խանին.
Մուղդսի Սարգսին.
Սուղեայ Մելքոնին.

Քէֆ անողներից՝

Մաթոսի Յակոբին.
Մզոյի Գրիգորին.
Բալթաբեղ Ալլահվերդուն.
Մուղդսի Մուրադին.
Թաթոսի Յարթենին.
Բաբայի Մարտիրոսին.
Բեղլու Սարգսին.
Մզոյի Սհակն ու Մաթոսի Ներսէսը՝ զաթի ադի բէլլու են, Էէյլի-մաՀլումի նման յիրարից չեն ՀրկՆրվի։

15. Քեօրփալու.

Իշխաններից՝

Մուշի Յակոբին.
Գուլէյէնց Աւետին.

Շմաւոնենց Օհաննէսին.
Բաբաջանի Հայրապետին.
Իսրայէլենց Գաբրէլին.
Ներսէսենց Սեդրակին.
Եղոյենց Մկրտչին.

Քէֆ անողներից՝

Փինաչու Եղոյին.
Բաղսարի Գէվոյին.
Փանոսի Էլոյին.
Յարթենենց Հայրոյին.
Սաքոյի Եղոյին:

16. Զէյվայ.

Իշխաններից՝

Այվազի Վարթանին.
Տէրաէրի Գրիգորին.
Շագոյենց Ներսէսին.

Քէֆ անողներից՝

Ղասաբ Սմբատին.
Շաբոյենց Մանուկին.
Տօնոյի Ցահրադին.
Քոջոյի Յարթենին:

17. Ներքին Այլանցու.

Իշխաններից՝

Մելիք Խուդոյենց Զաքոյին.
Ղամբարի Սհակին.
Խուդոյենց Բաբային.
Տանուտէր Նավոյին.

Քէֆ անողներից՝

Մգոյենց Գէորգին.
Սողոյենց Գաբրէլին.
Խաչո Բիջոյին.
Զըմրութենց Սարգսին.
Լուլուշենց Ղուկասին.

18. Ալիբէգու.

Իշխաններից՝

Խանգեալդու Գրիգորին.
Նազարէթին.
Մարկոսի Օհանէսին.

Քէֆ անողներից՝

Զիվար Խոջին.
Խառատ Մնացականին.
Մուսէսի Խաչոյին.
Խուդոյի Զաքարին.
Օհանի Յարթենին:

19. Վերին Խաթունարխ.

Իշխաններից՝

Բաղալի Ղուկասին.
Տանուտէր Օհանին.
Ամրահենց Կարապետին.
Խառատ Կիրակոսին.
Եղոյի Յակոբին.

Քէֆ անողներից՝

Շաշիկանց Մկրտչին.

Ղարոյի Յարթենին.
Զիչակենց Մանուկին։

20. Ներքին Խաթունարխ.

Իշխաններից՝

Գլավայ Ալէքսանին.
Սարդարի Խաչատուրին.
Խանգուլենց Բաղային.
Բանավշի Մանուկին.
Թարխանենց Աթոյին.

Քէֆ անողներից՝

Մաջլումին.
Տէրտէրենց Գրիգորին.
Ալայենց Աւոյին.
Դուքանչի Յովակիմին.
Դալլաք Բաբինին։

Այս բոլորը մի առ մի թուելուց յետոյ՝ Կոստանը ասաց.

— Ասել քո ղօնաղները, ափէր Խանգեալդի. ըստոնց գեօրայ էլ թագարէք պրտի տենաս։

— Քեռ՝ խօրը օղորմի, մեր եղներէն Դումոն ինան Զուլօն կը մորթենք, մէյն էլ ծախ կառնենք. իշղըդայ էլ որ արաղ կինի, եղ պրինձ, քեալամ մօթալի պանիր, ինչ որ ուզես՝ հապը ի. տիու հէնց ղօչաղ էլ աղէկ կառավարես. էտ էլ ասա՛, սաղանդարքներէն վարի՞ն կանչենք, ասաց Խանեալդին։

— Սաղանդարներից լաւերն ասեմ.

1. Էջմիածնայ՝ (Վաղարշապատից) ուստայ Ղազարին, որ ընդուր թայը չըկայ։
2. Զուռնաչի Օհանին։
3. Սուլթանի Օհանէսին.
4. Ուստա Մանուէլին։
5. Շահենի Պողոսին՝ որ թամամ՝ ա.
6. Տէրտէրենց Արամին։

Մըհալի ուստէքից.

7. Աշտարակցի Փիլոյին.
8. Քեռ Մաղոյին.
9. Ուստա Սարոյին.
10. Ֆռանկցի Միկիչին.
11. Աղջաղալեցի Կորոյի Ներսէսին։

Սամսաղարից՝

12. Ուստա Օհանին.
13. Ուստա Սեփանին.
14. Պընդռի Մխոյին, ըստոնք քոմմըքով էլ քաշ զուռնաչիներ են։

Քաւոր Նաղարը գովելով ասաց.

Աղուորթ ի (ուղիղ)՝ տըանց ըմբնին էլ աղէկ կը ճաշնամ, փիր ուստաքար են, ամա մէ պրան կայ, դանց դհոլքեր ա շատ փսաիկ են, կասես սատանայի խըրծիկ (տիկին) ըլեն, ծէն չեն խանելի. տրպ, տրպ մառթու զահլայ են տանելի. դհոլը էնէնց տըկի ըլի՝ որ զարկելուն զըրըմփոցը խանի՝ լսողի քէֆը իկեայ։

Կոստան. — Վնաս չունի, վէնձ դհոլ էլ բերել կըտանք, Հայթաղցի Խուդոյին, Խընաւուզցի Ակոյին, թամբէհ կանեմ, որ իրանց դհոլ, կոպալները առնեն գան։ Վա՛յ, ձեր տունը շիքվի, իմ մտէն յիլաւ, դուք էլ չէք ասըմ, Քեօրփալեցի Կընդլին մէ դհոլ ունի, որ սուլթ չասեմ մէ համիայ տան ալրի ամբար ա. կասեմ էն էլ բերի։

Նազար. — Ղուրբան Կոստանիս, կո տանցմէն տըկի ըլի հա՛, որ հար գարկելուն՝ մառթի խոքի մարմին ա թազանայ, դամբքերը ղիյհն ուրայ խաղս ըլի . . . ։

Խանգեալդին. — Էտ էլ ըլաւ. ասէք ըշկանք, էտ ղըդա ջամեաթին վա՞ւ տըկի կանչի, չորս մառթ չի բաշարի, օրն էլ մօտացիր ի. — Կոստան ջան, քեզմէ սավայի էտ ճոկ մառթու պրան չի։

— Ըդէլ իմ աչքիս վրայ, ըդոնց քոմմէքի իւրդ, իւվէն (բնակարան) ես գիդամ, ըտ էլ իմ պարտքը։ — Ձեր տունը շէն, սոված, ծարաւ մեռանք, մէ թիքա խաց ուտենք, գինի խմենք, պակաս պռատն էլ յէքուց կը դզենք, ի՞նչ յիլաւ որ։

Նազար. — Ապրի՛ Կոստանը, շատ աղուորթ ի ասելի, կլօխքերս կեախնը պատրուվի։

Խանգեալդին. — Շա՛մամ։

— Ասա՛.

— Էլ ի՞նչ ասեմ, էլ խաց, կերակուր, կինի պէ. մենք ինգիր ենք զրոցի, տիու էլ չես ասելի, ախար էտ մառթներ ա քաղցած մեռա՞ն։

Շամամը ծիծաղելով. — Խացը չի փախնելի,

առաչ պրան կը խօքան, եսի խաց կուտեն, կինի կը խմեն. համեցէք։

Երկար ուտել խմելուց յետոյ Կոստանը շարունակեց.

— Հըմի լաւ չիլա՞ւ, Աստոծ էլ ուրախացաւ, բանդէն էլ. ես էն գլխէն կեթամ էտ մառթներին մէկ մէկ թահլիք կանեմ դուք էլ մի քանի հատ վէնձ արաղի պղընձներ, քերեղաններ, դաստախուններ, գինու գաւեր, գոլուներ, աղաթասներ հազիր կանէք. ձեր դարևան բարեկամների տները՝ չորս-հինգ լիտրաչանք ալուր կը գրկէք, որ հարսնիքի համար հաց թխեն. յիրգուայ ժամերը չըզարգած՝ ես ըստէ կըլնեմ էտ ջավրն էլ թող քաւոր Նազարը քաշի ընչունք իմ գալը. տեղից վեր կացաւ ու բարի գիշեր ասաց։

Հինգշաբթի գիշերով՝ Նազարը մի քանի երիտասարդներ ժողովեց, պատուիրեց որ այդ բոլորը անթերի կատարեն. մինչև նրանք բանը կարգի քցեցին, Կոստանը քսանից աւելի գիւղեր պըտելուց յետոյ՝ վերադարձաւ Խանգեալդու տունը։

— Բարև ձեզ, ախպրտինք, մոնց էք. ես որ իմ պարտքիցը պռծայ. քաւոր Նազար, դո՛ւ մոնց ես.

— Փա՛ռք Աստու, եանի մենք էլ պրանէ պըռծնելով ենք, զօրանան տղները, աղէկ դայրաթ արին։

Հինգշաբթի իրիկուն՝ Կոստանը մի թեթև հացկերոյթ պատրաստել տուեց, որին տաշտաղրէք կասեն, մի քանի երիտասարդներ ժողովելով՝ նորանց իւրաքանչիւրին ջոկ ջոկ պաշտօն յանձնեց. մէկին գինի պահպանելու, հաւատար-

մութեամբ, զգոյշ կառավարելու պաշտօնը, որին մուճուր կասեն. միւսին՝ մարդկանց կարգաւ տեղ ցոյց տալու պաշտօնը. էն միւսին՝ կերակուրների վրայ հսկելու իրաւունքը. մի քանիսին էլ կարգեց սեղանին ծառայելու. մի քանի պառաւ կանայք էլ կարգեց իբրև խոհարար, որոնց տանտրկին կամ քէյվանի կասեն. երկար քէֆ անելուց յետոյ, հրամայեց բոլորին էլ՝ որ տան պատերը ալուրով զարդարեն, զանազան պատկերներ նկարելով. զօր. մարդի, ձիու, պար եկողների, զուռնաչիների և այլն, որը ցոյց էր տալիս հարսանեաց առաջին նշանները։

Ուրբաթ առաւօտ՝ դեռ ագօթարանը լաւ չէր բացուել՝ Կոստանը գնաց Խանգեալդու տունը.

— Բարի լիս, ափէր.

— Ա՛յ տիու իմ աչկիս վրան էկար, քէֆքա, հալը, եար ըշկանք ի՞նչ հալի ես։

— Քէֆս լաւ ա, համա՝ հալս լաւ չի, մէ բուԹիլ արաղ բերել տուր, մէկ մէկ խմենք, տեսնանք ի՞նչ ենք անում։

Էնց էս միջոցին՝ քաւոր Նազարը ծառայողների հետ ներս մտան. մի քանի բաժակ արաղ խըմելուց յետոյ, Կոստանը հրամայեց, որ շուտով կանչեն գիւղի մնագործներից՝ Մշեցի Յակոբին ու Մուրատի Բաղալին. իսկ զուռնաչիներից՝ ուստա Ղազարին իրեն համքեարներով. դորանց ևս օրինաւոր պատուելուց յետոյ, հրամայեց որ մացուները մորթեն, ի հարկէ դափ ու զուռնով. գիւղացիք սկսեցին երկար պար բռնել՝ զանազան կեռնացներ խմելով, իսկ Կոստանը տուն վերադարձաւ ու պատուիրեց, որ լօրու պղինձները շուտով Թունդրի վրայ դնեն։

Հըմի գիդա՞ք ինչ կայ.

— Ուստա Սեփանը գեղի դլխից, ուստա Օհանը գեղի տըկից, սաղ գեղը անեատուն դհոլ զուռնով ման կը գան, քոմմըքին էլ մէկ մէկ Թաս գինի կտան յիր մարդայով համեցէք կանեն, որ իրիկունը գան Խանգեալդու տունը հարսնիք։

Ա՛յդպէս էլ արեցին. իրիկուայ ժամը դուրս եկաւ Թէ չէ, արդէն ամեն ինչ պատրաստ էր, գիւղացիք սկսեցին մէկմէկու ետևից լցուել Խանգեալդու տունը, էլ պակաս մարդ չմնաց. իւրաքանչիւրին իրենց արժանեաց համաձայն տեղ ցոյց տուին և հրաւիրեցին նստելու, Թէ հեռաւոր հիւրերին և Թէ տեղացիներին։

— Տղէրք, ճրաքները վառէք, ձայն տուեց Կոստանը. գինի, մազա բերէք՝ ուստա Ղազար, հըմի դօրը քոնն ա, մե քիչ դամ ու դում արա, Թող էս ջամահաթը ուրախանայ, ընչունք բանը ինքն յիրան նշանց կըտայ. ամա էն լաւ մուղամմաթներից կածես՝ որ ես հաւանեմ։

— Դու լաւ եալանչուԹիւն կանես, մասալէք կասես, մուղամմաթներից ի՞նչ գործ ունես, ի՞նչ քու բանն ա, ասաց ուստա Ղազարը։

— Ես Պետոյի Եալանչի Կոստանն եմ, իմ ձեռից բա՞ն կը պըռծնի, ընձի մէ ձեռո՞վ ես բըռնում, ուստա՛ Ղազար։

— Դէ որ գիդաս՝ զայդէքանց մի քանիսի անունները տուր տենամ։

— Որ տասներկու մուղամմաթներն էլ ջերգով ասեմ ո՞նց կանես.

— Քեզ մի լաւ պատիւ կըտամ մի քանի մարդկանց հետ, համամով, չայով, փինջով, գինով զակուսկով։

— Ասեմ, իմ ջուխտ աչքիս վրայ. այ մառթիք, դուք համ վկայ յիլէք, համ էլ լաւ անգաձ դրէք.

1. Ռաստ, իրանց գիւշէքով, (յորդոդորակներով)։
2. Շիր.
3. Նովրուզ Արաբի.
4. Սէգահ - Մուղալիֆ.
5. Զարգահ.
6. Դուգահ.
7. Փաս մուղալի.
8. Իմայի.
9. Նօվայ.
10. Մաղարանլար, (ամենաբարձրից)։
11. Բայեաթի շիրազ.
12. Մահուրի։

— Ըդէ՞նց ա, ուստա Ղազար, սուլթ ու խլաֆ հօ չը կա՞յ.

— Ապրիս Կոստան, շատ լաւ ասեցիր, ես իմ խօսքին տէր եմ։ մեռած, էտ ո՞ւմից ես սովորէ, դրուստը ասա. զարմանալով հարցրեց ուստա Ղազարը։

— Դրուստը ասեմ՝ քեզնից եմ սավրէ, պատիւն էլ քեզ փէշքեաշ ըլնի. էս զայդէքը փայ կանես ուստէքանց վրայ, որ ամեն ուսաայ յիրա վախտին՝ յիրա պարտքը ճանանչի. համա գիւշէքը թամամ ածեն, գլխանց չանեն։

Ուստա Ղազարը սկսեց ժողովրդոց սիրած եղանակներից մի քանիսը նուագել, իսկ ժողովուրդը իրենց կամաց համաձայն՝ խմում էին զանազան առարկաներ խօսելով։ Դորանից մի քանի ժամ առաջ Կոստանի կարգադրութեամբ Կիրակոսը իւր ընկերակիցներով արդէն գնացել էին քաւոր Նազարենց տունը հինայ դնելու, ինչպէս սովորութիւն էր. այնտեղ երկար պարելուց, զուարճանալուց յետոյ, քաւոր Նազարին իրեն բարեկամներով հրաւիրում են Խանգեալդու տունը՝ ուստա Մանուէլի նուագելով։ Կոստանը քաւոր Նազարին քահանայի մօտ հրաւիրեց նստելու. ձայն տուեց։

— Դէ՛, տղերք ձեզ զուրբան, էլ ջան պըհելու վախտը չի. դաստախունները քցէք, հաց, գինի, պանիր, աղաթաս, հէչ մի բան պակաս չըթողնէք. դառնալով քահանային, — Տէ՛ր հայր, դու հացը օրհնի. թող էլլիդը ուտեն, խմեն քէֆ անեն. ըստէ հեռու տեղերից շատ մառթներ կան, թող մէ թիքա հաց ուտեն, որ իշտահով խմեն։

Քահանան հացը օրհնեց, բաժակ վերցրեց ու ասաց.

Սիրելի ժողովուրդ, ես խնդրում եմ, որ այս երեկոյ, այս հարսանեաց ուրախութեան թամադայ, կառավարիչը լինի մեր սուդեայ Մելքոնը,

որ բոլորին էլ նա լաւ է ճանաչում։ խմում եմ նորա կենացը որ ձեզ լաւ և հաւասար կերպով կառավարի։ Աստուած սիրողը խմի։ բոլորն էլ ձայն տուին։

— Բարով կառավարի։

Մեր կառավարիչը սկսեց նախ՝ փառք և շնորհակալութիւն մատուցանել Երկնաւոր Թագաւորին ասելով՝ այս բոլոր բարիքը՝ որ մարդիկ վայելում են՝ նորա շնորհ՝ պարգևն է։

Երկրորդ բաժակով՝ կեանք երկար բարեմաղթեց երկրաւոր Թագաւորին Ռուսաց՝ որի հովանաւորութեան տակ և շնորհիւ կապրենք բոլորս սիրով՝ աներկիւղ և անվախ։

Իսկ երրորդ բաժակը՝ նուիրեց ընդհանուր հոգևորականութեան՝ նորանց սուրբ աղօթք և օրհնութիւնն էր խնդրում։

Այնուհետև խմեց երկու բարեկամների՝ պատճառի՝ նորեկ հիւրերի և տեղացիների կենացը՝ իւրաքանչիւր բարեմաղթութեան վերջերում լսվում էին կեցցէներ՝ ուռաներ։ երգեցիկ խումբն ու նուագածուները կային ու կային։

Նիսաը տևեց գիշերուայ երեք ժամը։ էլ կենացներ պակաս չը մնացին։ կառավարիչ Կոստանը ձայն տուեց։

— Տղէրք՝ հացը հաւաքէք։ էս խալխը պրտի խաղան։ ուստա Պողոս՝ քօչին ածա։

Ծերերը գնացին՝ իսկ երիտասարդ՝ հարս և օրիորդներն սկսեցին պար բռնել՝ զանազան լէլէներ ասել՝ մինչև որ վարպետները հաց կերան։

շուտով սկսեցին դափ ու զուռնէն ածել։ Նատերն էլ թունդրի շուրջը խումբ խումբ նստած՝ դ/նուգաւն ու զակուսկին առաջներին՝ մէկմէկու կենաց էին խմում։ այդ միջոցին՝ քաւոր Նազարը ներս մտնելով ասաց։

— Կոստան Ջան՝ էտ դհոլը փոխել տուս՝ տար ծէնը տանէն տուս չի իկեալի՝ կեղի մառթները չեն իմանալի՝ խաղի վախտն ի՝ եոխսա չէ։

— Էս սհաթին՝ կանչէք Խուդոյին՝ դհոլը յիրան կօպալներով առնի դայ։

Քառորդ ժամ չանցած՝ Խուդին ներս մտաւ՝ ինչ մտաւ՝ մի ահագին շաքարի բոչկայ շալակին՝ երկու հատ էլ ծղանի կտորներ կռնատակին։

Ուստա Սեփո՝ ուստա Օհան՝ ածելու դօրը ձերն ա։ մէ քաղցր եայլի կածէք որ՝ պառաւներին՝ հալիւորների ոսկրատանքն էլ խաղս յրինի։

Մեր վարպետներն սկսեցին մի ծանր եղանակ՝ որին ժողովուրդը Զօրանքեարի եայլի է ասում։ Ուստա Խուդին էլ՝ որ մի՝ երկու դափին չը խմեց՝ գլուխ էր հարկաւոր որ դիմանար՝ չորս կողմից ձայն տուին.

— Կո էտի՝ հա՝ ալբըհալ ա զբրբմի-զբրբմ փոցը ինդեաւ տուն ա՝ սավայի մեր կեղ ա՝ մկայ Սամաղար՝ Աղջըղալայ՝ Քեօրփալու էլ լսան։

Պարը շարունակուեց՝ շատ քչերը մնացին նստած՝ պարող բազմութեան պատճառաւ՝ պարը կրկնապատկուեց՝ այսինքն՝ երկու կարգ։ երկար խաղալուց յետոյ՝ յանկարծ մի սարսափելի աղմուկ բարձրացաւ՝ պարագլուխ կանգնելու համար՝ որին

գիւղացիք եայլի ըաշի, կամ զեօնդ քաշող կասեն. վերջապէս, մեր կառավարիչ Կոստանը՝ հազիւ կարողացաւ մի կերպ խաղաղութիւն գցել, — որ յերթով կատարեն այդ խաղը։ Շատ անգամ պատահում է, որ սարսափելի կռիւներ են առաջ գալիս՝ մէկմէկու վիրաւորելով։

Քաւոր Նազարը տուն մտնելով՝ Կոստանին ասաց,

— Ա՛յ քեռ տունը շէն, մէ էլ տուս, տես աղօթքանը պացվիր ի, մնացիր են ջահել, ջուհուլքեր ա, մեզ էլ խաղար պըան ունենք խօքալու, սոյհլ արա, բոլ ի։

Կոստանը ձայն տուեց.

Ուստէ՛ք՝ գհոլ զուռնի ձէնը կտրէք. դառնալով ժողովրդին, Աստուած սիրողը չընեղանայ, — ամեն մառթի տուն կայ, մեր թաղայ փեսին էլ քուն կայ։

Բոլորն էլ շտապեցին իրենց տները վերադառնալ։

Կոստանը բոլոր ծառայողներին կանչեց ու ասաց.

Էլ ձեզ քուն չըկայ, միս բրդէք, տօլմայ ծեծէք, փաթաթէք. խորոված, խաշլամէն ջոկ արէք զարիբ զօնաղների հըմար։ Հարսներ, աղջըկներ, դուք էլ բրինձ յիսարկէք, ջուր բերէք, աւել արէք. ամեն մառթ թող յիր պարտքը ճանանչի. էս օր շաբաթ, պսակի յօրն ա, զայրաթ արէք քոմմըքով էլ, որ պարզերես դուս գանք. ափեր Խանգեալդին ափսոս մառթ ա։

ԺԵ.

Պ ս ա կ.

Ամեն ինչ պատրաստելուց, կարգի գցելուց յետոյ՝ քահանային հրաւիրեցին պսակի հանդերձները օրհնելու, ուր հարիւրաւոր ժողովուրդ, մանաւանդ երիտասարդներից և օրիորդներից շատերը ցանկանում էին այդ ծիսակատարութեան ներկայ լինելու. յանկարծ մի տեսակ լռութիւն տիրեց և լսուեց մի ձայն.

Ողջո՛յն բոլորիդ.—այդ ուղթսուն ամաց ծերունի և պատկառելի Աւետիս քահանան էր, որին գիւղացիք սրբութեամբ կընդունէին։

— Աչքդ լոյս, եղբայր Խանգեալդի, փառք Աստուծոյ, արժանացար Կիրակոսիդ թագը համբուրելու, ասաց քահանան։

— Ծառայ եմ սուրբ աչիս, տէրտէր ջան, Աստած ժամ պատարաքի պախի, քեռ սուրբ օրհնութիւն ա՝ մեր կլխէն անպակաս անի. պըարով քեռ թոռ Ներսէսին էլ փսակես, էն որ վանքի տիպարան ա կիրաշար ի, պատասխանեց Խանգեալդին։

Այդ միջոցին՝ Կոստանը մի մեծ կապոց առաջ բերեց, որի մէջ գետեղուած էր հարսնացուի և փեսայացուի հանդերձները, նորանց հետ էլ և քաւոր Նազարի թուրը, ինչպէս սովորութիւն է ժողովրդոց մէջ։

Տէր հայրը սկսեց հանդերձ օրհնելու կարգը կատարել՝ առանց վերջ տալու, թէ արդեօք, իրեն ինչո՞վ պէտք է վարձատրեն. ինչպէս շատ տեղ և

շատ քահանաներ ժամերով յետաձգում են. քահանան իւր արժանաւոր պատիւ ու վարձն ստանալով օրհնեց ու գնաց։

Ուստա Արամ, ձայն տուեց Կոստանը. նօրաթը քոնն ա, մէ լաւ ընդղազիւլ կածես, որ կոսպանդ պըտի խաղացնեն, կապեն։

Այդտեղ ամեն մի օրիորդ իրաւունք ունէր պար գալու, իսկ կոսպանդ կապելը՝ նոր փեսայի մօտիկ ազգական՝ հարս, աղջիկներին էր պատկանում. որը մի կանաչ, կամ կարմիր խաս թաշկինակ (այլուխ) մերթ ուսերին գցելով՝ մերթ ձեռքերի վերայ խաղացնելով՝ մօտենում է պսակուողին և մի քանի անգամ խաչաձև չափելուց յետոյ, կապում է փեսայացուի կուրծքից՝ աջից դէպի ձախ. իսկ երկրորդ թաշկինակը որոշ գոյնով կապուելու է հարսնացուի, այն է Շահրազենց տանը՝ ձախից դէպի աջ՝ նոյն սովորութեամբ։

Ուստա Ներսէս, Սարօ, Պօղոս, դուք բակի մէջ, կտրանը, ձեր համբերով՝ լաւ սեզեան, դուզեան կածէք. ուստա Փիլօն, Սեփանը, Օհանը՝ տըղերքանց հետ՝ գեղի յըմեն քուչէքն էլ կը պտըտէք, ո՛վ որ ռաստ կը գայ, գինի կըտաք, համեցէք կանէք, որ գան հաց ուտեն, էթան խնամոնց տունը. ուստա Մանուէլ, դու էլ նստի դամ ու դում արա, որ էկողը նստի քէֆ անի. դառնալով քաւոր Նազարին.

— Քաւո՛ր աղա, ըտէնց չիլաւ, ես գիդամ դու էլ ընձի պէստ մաղմուն (զուրկ) ես, հըլա խալխը յուշ կը գան, մենք վախտով մէ քանի թիքեայ հաց ուտենք, մէ քիչ էլ գինի խմենք, թէ չէ ընչունք աղօթարան բացվելը՝ մեզ քուն ու դնջում չըկայ։

— Ափեր Խանգեալդի, դու էլ էկողին նստացրայ, ընչունք մենք մէ զակուսկի անենք. մենք էլ մառթ ենք, ասաց Կոստանը։

Քաւոր Նազարն ու Կոստանը մտան շիրախանէն. քերեզաններ մէջ բերին՝ որպէս զի շուտով վերջ տան։

Կոստանը քաւոր Նազարից պակաս չէր խմելու կողմից, բայց վարպետ էր, ամեն բանի ժամանակը գիտէր. Նազարի կամքովն էր գնում. շատ անգամ նրան խափում էր կիսատ պռատ խմելով, յանկարծ տեսաւ որ՝ Նազարը աղօթք է անում, քիչ է մնում որ ծունր էլ դնի՝ ասաց.

Քաւո՛ր աղա, վախտն ա, հրմի խալխը էկան, վեր էթանք.

Կոստան ախպէր, քէֆս շատ խարաբ ըլաւ, կուզեմ մէ պծառ աչկս կպուցեմ.

— Իմ քէֆն էլ լաւ չի դուզն ասեմ, արի գնանք գոմը մէ քիչ սուս անենք վէ կենանք։

Քաւոր Նազարը պարկեց եզ, գոմշների մըսուրքում, իսկ Կոստանը օդայում, աչքի առաջ։

Կոստանը սուս արեց, մինչև որ քաւոր Նազարը ուզեց խոսացնել, վեր կացաւ ու ինքն իրեն փընթփընթալով ասաց.

— Քո տիրոնչ պղինձը յընկնես, հըլա տես, էն ուզում ա Պետոյի եալանչի Կոստանից գլուխ հանի, ես օրը հարիր պուտուկ եմ շիքըմ, ամա հէչ մէկին էլ կանթ չեմ կըպցընըմ. ասաց ու տուն

մնաս՝ իրեն կառավարչութիւնը շարունակելով։

Խանգեալդին. — Կոստան ջան, էկար.

— Էկայ ափեր.

— Բա քաւոր Նազարը իւր ի։

— Ես տեղը գիդամ, Թող մէ պըղտիկ սուս անի. ափեր, թէ մառթները թամամ են, հացը քցել տանք։

— Տիու գինաս, ինչ թաւուր կանես՝ արա։

Կոստանը էն բոպէին օգնականներին կանչեց, հրամայեց հացը գցեն. ամեն ինչ դասաւորելուց յետոյ՝ տէր հայրն իրեն պարտքը կատարեց. ժողովրդոց համաձայնութեամբ՝ սուդեայ Մելքոնը նորից շարունակեց իւր կառավարութիւնն ինչպէս որ հարկաւորն էր։

Վերջապէս հերթը եկաւ քաւոր աղի կենացը խմելու, հարց ու փորձն ընկան թէ ո՞ւր է քաւոր աղան։

Կոստանը խոստացաւ շուտով բերել տայ, գնաց գոմը, Նազարին ձայն տուեց.

— Քո՛ տունը վերան յըլնի, քանի՛ քնես, քո կենացն են խըմըմ վեր էթանք է։

Նազարը հրամ անելով գլուխը բարձրացրեց, մնուրքից դուրս եկաւ, սկսեց դարմանոտ շորերը մաքրել.

Կոստանը նկատելով ասաց.

— Քաւոր Նազար, բա քո չուխի, արխալուղի թև, փեշերը հո՞ւր ա։

— Ընչի՞.

— Էլ ինչ ընչի, գոմըշտանքը խոտ, դարմանի հետ սաղ ծամ կըտըրաէ, թիքա թիքա են արէ.

Նազարը նայելով.

Վա՛յ, բը տար ճարը, հալը ի՞շխոյ կըլի, մէ սա-նախէր Խանգեալդուն կեօղնիկ ասա թող իկեայ ըշկանք։

Խանգեալդին տեսաւ թէ չէ՝ մնաց մոլորուած, էլ ի՞նչ պէտք է աներ, գնաց իւր նոր չուխայ, արխալուղը բերեց հագցրեց Նազարին ասելով.

— Էլ միտք անելով զատ չի ըլի, էրկուսն էլ մէ ըռանգի, մէ բոյի, մէ ուստայի կարած, խալխը ինչի իմանալի թէ ինչի ուրթնի ասելով՝ հագցրին Նազարին ու տուն տարան։

Վերջապէս՝ քաւոր Նազարը բաժակ ընդունեց, շնորհակալութիւն յայտնելով բոլորին՝ կեցցէներով դատարկեց։ Այնուհետև կառավարչի յայտարարութեամբ՝ ժողովուրդը ոտքի կանգնեց. հարսնացու Նիգեարի հանդերձներն էլ սինու մէջ դասաւորած՝ նրանցից մէկն իրեն գլխի վրայ բարձրացրեց, ամբոխն էլ կեցցէներ գոռալով, պարելով առաջ գնաց դէպի Շահբազի տունը, ուր բարև տալուց և աչքալուսէք խօսելուց յետոյ նստեցին։

Խանգեալդին. — Խնամի՛ Շահբազ, պինդ կայնի, քեզի զօնաղ ենք էկի, չը վախենա՞։

— Քեզ զօչ քեալլան սաղ ըլի, տիու էլ քեզ զօնաղքերն էլ՝ իմ՝ աշկին, իմ կլխին էկաք. տաներ, կինի պերէք, խացի թաղարուք տըսէք, շո՛տ արէք։

Ժողովուրդն սկսեց իւր սովորական կեր ու խումով պարապել, — կենացներ դատարկել, խաղեր կանչել. իսկ կանայք մի առանձին տան մէջ

Նիգեարի հարսանեաց հանդերձներն էին հագցը-
նում, զուգում ու զարդարում. գլուխը կապում
իրենց սովորական ձևով, որոց առաջնորդ կամ
վարպետն էր քաւոր Նազարի կինն և այդ պարտք
ու պաշտօն՝ միայն նորան էր վերաբերում։

Խնամի՛ Շահբազ, ձայն տուեց Խանգեալդին.
Հա՛մմէ.

Հրամանքըտ պըարի, էտ խօրատ խօրատ կե-
նացքերի խմա, թազզայ կարասի կինի տըկի ըլի,
որ լէվի։

— Է՛տ սհաթը. տըղներ, էն Եուվայու ջըխ-
տանոց կարասքերէն մէկի պերանը պացէք, իմ
խնամու խաթըր ա մայեար մէ էրկու կարաս կինիով
տըկի կուռեմ. քեանի կըբաշարէք խմէք, քէֆ
արէք. ուստաներ, նային զուռնան փչէք թող խը-
նամուս խաթըր ա խոշ ըլի։

Մի քանի ժամ տևեց այդ հացկերութիւնը.
կառավարիչը ձայն տուեց, որ հացը վերցնեն, դեռ
մեզ շատ գործեր ունենք հոգալու՝ ասելով։

Քահանայի պատուէրի համաձայն՝ հարսնացու
Նիգեարը կանգնեց իր փեսայացու Կիրակոսի մօտ.
քահանան «Առեալ զձեռն Եւայի և տուեալ ի
յաջն Ադամայ» ևն. ասելով՝ առաջ ընթացան դէ-
պի եկեղեցի։ Մի քանի քայլ փոխելուց յետոյ,
ամբոխը տան մէջ կանգ առաւ, դուրս գնալու ելք
չըկար. շուտով յայտնի եղաւ, որ՝ հարսնացուի
եղբայրը՝ տան դռան առաջ կանգնած, թոյլ չէ
տալիս ոչ ոքի տանից դուրս գնալու։

Դա գիւղական մի տեսակ սովորութիւն է,

պատիւ է պահանջում. կամ փող, կամ հանդերձ,
որին դուռ ընէք կասեն։ Շուտով քաւոր Նազարը
այդ հարցին վերջ տուեց, ժողովուրդը սկսեց նոյն
հանդիսով դուրս գնալ. պարը շարունակուեց կա-
նանց օրիորդաց և մարդկանց բազմութեամբ մինչև
եկեղեցի մտնելը։

Ժողովուրդը նորից սկսեց պարել եկեղեցու
չորս կողմով՝ օրիորդաց գեղեցիկ լէլէներով, մինչև
որ լուր եկաւ թէ քահանան արդէն պսակի խոր-
հուրդը կատարեց, վերջացրեց, պահպանիչ է ա-
սում։

Ուստա՛ Պողոս, հերիթը քոնն ա, դու ջահել
ես, յանկարծ ձայն տուեց կառավարիչ եալանչի
Կոստանը. քէչայից դիմակը երեսին, մի երկար
փայտ էլ ձեռքն առած՝ փահլէվան ղարդաշ ասե-
լով թռչկոտում էր ժողովրդոց աջ և ձախ հրե-
լով, — մտէտ չէթայ, ուստա՛ Պողոս, Հայոց աղ-
ջըկների ղայդէն պըտի ածես հա։

Ուստա՛ Ղազար, Մանուէլ, Փիլօ, Ներսէս, Սա-
ըօ. Սեփան, Օհաններ, դուք էլ ձեր համքեարով՝
ձեր յիմացածն ածէք։

Խանգեալդին գոհ սրտով՝ ուրախ, ուրախ ձեռ-
քը ջէրը տարաւ, հին ժամանակից պահած, ժան-
գոտած պղինձ, արծաթ փողերից հանեց ու շպըր-
տեց բազմութեան մէջ, դորան էլ անկած ընտուկի
են ասում։ այդ հանդիսով հասան Խանգեալդու
լայն ու ընդարձակ բակը ու կանգ առան։

Աստուած սիրողը հեռու կայնի՝ տընտղի,
թամաշ անի, — ափեր Խանգեալդին ու Շամամ

մայրիկը զիլլաշ պըտի կպնեն. Ուստա՛ Սեփան, էտ ղայդէն դու լաւ կածես։

Մի քանի մարդիկ Շամամին, մի քանիսն էլ Խանգեալդուն՝ քաշքաշելով հրապարակ հանեցին իրրև մենամարտողներ. մի քանի բոպէ մէկմէկու այս ու այն կողմ հրելուց յետոյ, Կոստանը Խանգեալդու ոտքերից քաշելով վեր գցեց գետին, Շամամին էլ նրա վրայ բարձրացրեց իրրև յաղթութիւն. ժողովուրդը ծափահարելով, ծիծաղելով միաբերան կանչեցին.

— Հա՛յ, հա՛յ, Խանգեալդի, չամչըցա՞ր, որ Շամամը քեզի կետին զարկեց։

Բան չըկայ, ասաց Կոստանը, — համաշա Խանգեալդին էր Շամամին գետին զարկըմ, էս օր էլ թող Շամամը զարգի։

ԺԶ.

Ծաղ կանչել.

Դորանից յետոյ՝ մեր Կոստանը մի փոքրիկ սինի տուեց քաւոր Նազարին ասելով.

Ա՛խպըրտինք, եռլու, հեռու տեղից էկող բարեկամներ, ոնց որ մեր վէնձ պապերից ղայդայեայ յիլել, — մեր թազայ փեսին պըտի քօմագ անէք, էս քանի օր շատ խարջ, մասրաֆ ա՞ արել։

Մի խումբ երեխաներ էլ՝ նոր փեսայի կողքին կանգնած՝ սպասում էին Կոստանի հարցին պատասխան տալու. քաւոր Նազարը առանձին մի բան տուեց Կոստանին և նա ձայն տուեց.

Մեր նո՛ր փեսի մակարներ.

Խումբը ձայն տուեց.

— Համմէ.

— Աստուած ձեզ բարի կամէ. շէն մնայ քաւոր Նազարը, որ շատ քեօրլուգ քաշելուց եգնայ՝ տուեց մեր նոր փեսին եռեսուն մանէթ. խումբը Կոստանի հետ ձայնակցելով.

— Շէն մնայ տունը, շէն՝ դուռն էլ վրէն։

Այսպէս և այս կարգով, մեր կառավարիչը, որից 10, որից, 5, որից 3, 2, 1 բուբլի ստանալով, վերջին ձայն տուեց.

Շէն մնայ էլլիգը, ղարիբ ու երլու, տուին մեր փեսին՝ չորս հարիր յիցսունը օխտը մանէթ, շէն մնան, շէ՛ն ասելով՝ սկսեցին տուն մտնել։

Քաւոր Նազարը թուրը բարձրացնելով դռան գլխին խաչաձև գիծ քաշեց, որը թէ հարսին և թէ փեսային ամեն մի պատահարներից, վատ աչքից ազատ պահելու, փրկելու մի նշան, կամ սովորութիւն է։ Փեսային ու հարսին իրենց համար պատրաստուած տեղը տանելուց յետոյ, իւրաքանչիւր մարդ մի քանի բաժակ գինի խմելով, Խանգեալդուն աչքալուսէք ասացին ու հեռացան։

Կոստանը դարձեալ օգնականներին պատուիրելով ասաց.

Տղէրք, Աստուած կը սիրէք՝ ջան չը պահէք։ ձեր զօռը մնաց էս յիրիգուն, ամեն մարդ իրա բանին կենայ. գաւերը լցրէք, քերեգան, ադաթաս, դաստախոններ վախտով հազիր արէք, ձրաքները

ձէթ ածէք. մի խօսք պակաս բան չը մնայ։

Ուստա՛ Ղազար, զուռնէն սարքի, ընէնց էլ դու ուստա՛ Պօղոս, մուրթն ա, թող խալխը հաւաքվեն դան։

Զուռնի ձայնը դուրս եկաւ թէ չէ՝ գիւղի չորս կողմից մարդիկ սկսեցին թափուել Խանդեալդու տունը. Կոստանը նկատելով, որ ոչ ոք պակաս չէ, նախկին սովորութեան պէս՝ հրամայեց գինու գաւերը դարսել իրենց բաժակներով. շուտով հացն էլ պատրաստուեց. քահանան էլ իւր պարտքը կատարեց «Հայր մեր» աղօթքը վերջացնելով. բաժակն առաւ ու ասաց։

Օրհնեալ ժողովուրդ, այս վերջին իրիկունն էլ թող Աւշեանց Յակոբը կառավարիչ լինի, նա էլ տանուտէրութիւն, գլաւայութիւն շատ է արել. գիւղի համար ցաւակցաբար աշխատել միշտ ժողովրդոց շահ և օգուտը պաշտպանելով. խմում եմ նորա կենացը. ուրախութեամբ քահանային հետևեց ամբոխը ամէն, ամէն ձայն տալով։

Մեր նոր կառավարիչը դեռ նոր էր սկսել մի քանի միջանկեալ կենացներ խմել, ընդհանուր կառավարիչ Կոստանը առաջ եկաւ ու ասաց.

Աղա՛ թամանդա, ընձի յիզին կըտա՞ս որ մէ մասալայ ասեմ։

— Ինչի՛ չէ, իրաւունք ունես, պատասխանեց կառավարիչը։

Կոստանը շարունակեց.

— Թռչունի մէգը՛ մէ պօպօք քթաւ, չուզեց որ մենակ ուտէր. յիլաւ մէ բանցը սարի գլուխ՝

ձէն տուեց յիրա ազգ, երամին, ճրտճտալով, ծըվըլալով. եվ որ քոմմըքով էլ էկան՝ ասեց. — բարեկամներ, էսօր մէ պօպօք եմ քթէ, չուզեցի որ մենակ ուտեմ, ըդու հըմար էլ ձեզ դանչեցի, որ դուք էլ ուտէք։

Բիրաղնով էլ ուրախ յիլան, խաղացին, քէֆ արին, էկան որ պօպօքը ջարթեն ուտեն. դվօրը գլորեցին՝ պօպօքը չը կողրվաւ, նախլլաջ մնացին. ամենը մէ քանի կաուց զարկեցին՝ ինչ հալլահալով պօպօքը կողրեցին, էն էլ խեղճերի բախտից՝ փուչ յիլաւ. բիրաղնով էլ սըքուրան, ձէնները կտրեցին. նրանցից մէկը որ եաշով շատ վէնձ էր, էտ թաւուր բան շատ էր տեհէ՝ ասեց.

— Ի՛մ սիրելի յընդերներ, գիդա՞ք ինչ կայ, էս օր պօպօքը սարար յիլաւ, որ մենք ազգ երամով հաւաքվեցինք էկանք ես սարի գլոխը, ջահանդամը որ պօպօքը փուչ իլաւ, չէ՞ որ մէդմէդու սազ, սալամաթ տէհանք, իրար քէֆ, հալ հարցրինք, էս էլ քիչ բան չէր, ուրախացէք։

Աղիզ ախպըրտինք, ղշերը որ մէ փուչ պօպքի հմար ըրքամ քէֆ, յուրախութեն արին, բա մեզ ի՞նչ ա իլէ, որ մէ սազ մէնի խալխ էկել ենք ըստէ, քոմմըքով էլ իրար ճանանչըմենք, իրար քէֆ հալ հարցնըմ։ Ափեր Խանդեալդու քթաց պօպօքը փուչ չի, Կիրակոսին ա պսակըմ. կարաները լիքը, ամենը բօլ, բանի կարօտ չի. Աստուած սիրողը չը ինանտի, հայ ուտի, գինի խմի, խաղ ա՝ Աստըծուն փա՞ռք տայ։

Կառավարիչը Կոստանի կենացը առանձին իբ-

մելուց յետոյ, ինչպէս սովորութիւն է, շարունակեց նորից երկու խնամիների, փեսայի, հարսի, քաւորի, նորեկ հիւրերի, տեղացիների և ուրիշ լաւ լաւ կենացներ ևս խմել, ի հարկէ ժողովրդոց յայտնի Հայ և Պարսիկ աշուղների խաղերով ու երգերով։ Աւելորդ չենք համարում այդ աշուղներից մի քանիների անունները յիշել այստեղ, գոնէ օրքան մենք գիտենք. զօրօրինակ։

1. Դադա Եղգեար.
2. Դալլաք Մուրատ.
3. Սալմաստցի Յարութիւն.
4. Աթամ,
5. Զաքի.
6. Ղամբար.
7. Էյվազ.
8. Վանլի քիւչակ. (քիւչուկ, փոքր).
9. Քէշիշ - օղլի.
10. Ալլահ - վերդի,
11. Սէհրան.
12. Ղասաբ - օղլի.
13. Սարգիս Նաղոշքեար.
14. Նաղուբ - օղլի.
15. Բանգի.
16. Ղարաղուլ Բաղալ.
17. Գեօհար.
18. Խաստա - Ղասըմ.
19. Գեանջեցի Դամիրչի - օղլի.
20. Թուչչարի.
21. Միսկին Բուրջի.

22. Ղուլ Միքայէլ.
23. Ղուլ Աւետիս.
24. Միսկին Ցօնի.
25. Դուլգեար օղլի.
26. Զաքի, Օվչի Նավասի.
27. Ղուլ Ենգիբար.
28. Պետրոս.
29. Ղուլ Արզուման.
30. Ղուլ Բարա, զարգեար.
31. Զանգի.
32. Ղարիբ.
33. Քեարամ.
34. Սէյեադ.
35. Ամիրհ.
36. Նովրուզ.
37. Թիֆիլ Ղազար.
38. Լազգի Ահմադ.
39. Շիրին. } Վաղարշապատցիք.
40. Նիրանի
41. Քիմիայի.
42. Դիլդարի.
43. Ջիվան. } Աղէքսանդրապոլցիք.
44. Մալուլ.
45. Հաւէս.
46. Խայեաթ.
47. Փիզահ.
48. Պայծառ.
49. Շահթի.

50. Թոյլու Վարդան.
51. Սազայի
52. Ջոշխունի եւ այլն.

Ընթերցողներից և մանաւանդ սորանց աւելի լաւ ճանաչող դասակարգից ներողութիւն խնդրելով մեր պակաս-պռատի մասին, մենք դառնում ենք մեր բուն նպատակին։

Խանգեալդին ուրախանալով.

— Կոստանը խօրօտ մասալայ ասեց, զօրանայ. Ասված սիրող ա՝ չըխնահի, ուտի, խմի, քէֆ անի, — տըղներ, խացի պակասութեան չըլի, քեռսանեը տարտակ չըլէն. փլաւէն, շորվայէն, դօլմայէն, վարէն որ կուզէն՝ պերէք։

Երկար մէջոց զուարճանալուց յետոյ՝ տէր Հայրը Հայր Մերն սկսեց և պահպանիչով վերջ տուեց հացկերութեան. բոլորն էլ Խանգեալդուն աչքալուսէք ասացին ու շնորհակալութիւն յայտնեցին։

Ձայն տուեց Կոստանը.

— Ուստա՛ Մխո, Մանուէլի հետ քօչին ածէք։

Տեղացիք սկսեցին նորեկ հիւրերից երկուսին, երեքին իրենց տները հրաւիրել գիշերելու, գլխաւորապէս Խանգեալդուն օգնելու նպատակով, որ նորա համար ի հարկէ մեծ նեղութիւն կըլինէր բոլորին էլ հիւրասիրել. ժողովրդոց մեծ մասը թէ հանդիսատես լինելու և թէ պարելու նպատակով մնացին այդ տեղ։

Շուտով պարը շարունակուեց դարձեալ լէկներով. այդ երգելու միջոցին, շատ տղայ աղջիկներ մէկմէկու հասկացնում են, թէ նորանք մէկմէկու հաւանեցի՞ն թէ ոչ։

— Ուստա՛ Ղազար, դու բիրաղնից վէնձն ես, ուստա Պողոսին, Արամին, Ներսէսին, որին որ դու գիդաս, թամբէհ կանես որ քեզ լսեն, էս յիրկվան խաղը շատ երկար կը քաշի, դօրէդօր պտի — եայլի, կենդանապար, Ջանգիւլում, քօչարի, ղազախի, ըաղղազիւլ, ինչդար ղայդէք կան՝ պտի ածեն. դու գլխու քցի, քեզնից կուզեմ։

Պարը բոլորից և մեր կառավարիչ, եալանչի Կոստանը պարագլուխ անցաւ, շատերին խաղալու եղանակ, ձևեր ցոյց տալով։

Խանգեալդին. — Տըղնե՛ր, ինչ կանէք չէք անի՝ էտ ծեր պըլանն ի, ամա կինին ինան դօլուներ ա մոջլիսէն չէք վերցի. քեանի կը խմեն պերէք. ես ինան Շամամ ա մէյմէկիու խմա սաղ ըլենք. խարս ինան փեսան էլ մեր էրկրսի խմա։

Եթէ բանը պարող ու խմողների կամքին մնար, դեռ մի քանի օր ու գիշերներ էլ հարկաւոր էին. բայց Կոստանը վերջ տուեց, Խանգեալդուն ու Շամամին Ջանգիւլում խաղացնելով։

Ցանկարծ առաւօտեան զանգակները հնչեց, ամենքին էլ յայտնի եղաւ որ լոյս է. ժողովուրդը ի սրտէ շնորհակալութիւն յայտնելով Խանգեալդուն, կառավարիչ Կոստանին և նորա բոլոր օգնականներին, մնաք բարեաւ ասելով հեռացան։

Մի այսպիսի հացկերոյթ էլ լինում է առաւօտեան, որին խաշի առաւօտ են ասում, գլխաւորապէս՝ մերձաւոր բարեկամներին, նորեկ հիւրերին և բոլոր կառավարիչներին յարգելու նպատակով, որի գրելը մենք զանցառութեան ենք տալիս

ընթերցող պարոններին ձանձրութիւն չտալու համար։

Մենք էլ բոլոր սեղանակից հիւրերի հետ ձայնակցում ենք՝ Աստուած շնորհաւոր անի տեղով, որքչ ենք տալիս Կիրակոսի հարսանիքին։

ՑԱՆԿ.

Երես.

Երկու խօսք.

Ինձ ի՞նչ. 5
Վարդի զանգատը. . . . 6
Դեղին տերև. 8
Էշը պարտիզում. . . . 9
Հովուի սուգը. . . . 11
Աղաւնին ու ճնճղուկը. . . . 12
Զկնիկ. 14
Հաւի՛ զարմանքը. . . . 15
Թագայ հաց. 17
Զարմանք չէ՞. 19
Երկու հօտեր. 20
Գրաշարութիւն. . . . 22
Գիւղական զատարան. . . . 23
Այգեվաղ. 24

Կիրակոսի հարսանիքը.

Ա. Նրա մտածմունքը. . . 27
Բ. Շամամն ու Կիրակոսը. . . 29
Գ. Շամամն ու Խանգեալդին. . 30
Դ. Նազարն ու Խանգեալդին. . 35
Ե. Նազարն ու Թազաղիլը. . 37

Զ. Նազարն ու Կիրակոսը. . . 39
Է. Նազարն ու Շահբազը. . . 40
Ը. Նազարի պսակը. . . . 43
(Թ.) Ժ. Քեասըմ - բիչըմ կամ բաշըղ . 49
ԺԱ. Հարսանեաց հանդերձներ . . 56
ԺԲ. Շոր - ձևէք 60
ԺԳ. Խորհուրդ. 64
ԺԴ. Կառավարիչ Կոստանը. . . 67
ԺԵ. Պսակ. 87
ԺԶ. Ծաղ - կանչել 94